ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Միջազգային փորձն ու հեռանկարները Հայաստանում

Հոդվածների,
մեկնաբանությունների,
փաստաթղթերի ժողովածու

Երեւան
2004

Այս ժողովածուն արդյունք է Հայաստանի մի խումբ լրագրողների՝ Ֆրիդրիխ էբերտի անվան հիմնադրամի աջակցությամբ Գերմանիա կատարած ճանաչողական այցելության, ԵՄԱ ներկայացուցչի՝ Բաց հասարակության ինստիտուտի լրատվամիջոցների ցանցային ծրագրի աջակցությամբ Եվրոպայի անկախ մամուլի խորհուրդների դաշինքի
6-րդ ամենամյա հանդիպմանը մասնակցության, ինչպես նաեւ՝ Հայաստանում ինքնակարգավորման համակարգի ստեղծման հեռանկարների վերաբերյալ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ ԵՄԱ անցկացրած հետազոտության:

Գիրքը հրատարակվել է Ֆրիդրիխ էբերտի անվան հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Հայկական ԶԼՄ-ների ինքնակարգավորումը» ծրագրի շրջանակներում:

Թարգմանությունները՝ **Հասմիկ Բաբաջանյանի**

Խմբագիր՝ **Մեսրոպ Հարությունյան**
Համակարգչային ձեւավորումը եւ էջադրումը՝ **Նարա Մենդելյանի**
Ծրագրի տնօրեն՝ **Բորիս Նավասարդյան**

© Երեւանի մամուլի ակումբ

Ֆրիդրիխ էբերտի անվան հիմնադրամ

Բաց հասարակության ինստիտուտ

ԵԱՀԿ երեւանյան գրասենյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինքնակարգավորման
գերմանական համակարգը 6

«Մամուլի ազատությունը եւ
ինքնակարգավորումը» թեմայով
հանդիպում Կիպրոսում 13

Կլոդ-Ժան Բերտրան
«Պահապան շների»
պահապանները 24

Ջուզեպե Միֆսուդ Բոնիչի
Խոսքի ազատության էթիկական
կողմը եւ հետեւանքները Մարդու
իրավունքների եվրոպական դատարանի
նախադեպային իրավունքում 32

Լութց Թիլմանս
«Քերոլայնի» գործը Մարդու իրավունքների
եվրոպական դատարանում
Գերմանիայի մամուլի խորհրդի դիտարկմամբ 38

Մամուլի դեմ գանգատների
բրիտանական հանձնաժողովի որոշումը
«Քաղցած շունը սկսում է հոշոտել իր
թոշակառու տիրոջը» հոդվածի վերաբերյալ 44

Եվրոպայի խորհուրդ
Նախարարների կոմիտե
Հռչակագիր
Լրատվամիջոցներով քրեական
դատավարությունների մասին
տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ 46

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ինքնակարգավորման համակարգ ձեւավորելու
վերաբերյալ լրագրողական հանրության
կարծիքների վերլուծություն 51

Ինքնակարգավորման գերմանական համակարգը

2004 թվականի ընթացքում Երեւանի մամուլի ակումբը Հայաստանում ինքնակարգավորման համակարգի ձեւավորման գաղափարը տարածելուն միտված մի շարք միջոցառումներ է իրականացրել՝ կլոր սեղան, սոցիոլոգիական հետազոտություն, վերականգնել է «Մամուլի ակումբ» հեռուստահաղորդաշարը, որ եթեր է հեռարձակվում Հայկական երկրորդ հեռուստաալիքով:

Այդ միջոցառումների շրջանակներում 2004 թվականի մայիսի 22-ից 29-ը Հայաստանի լրագրողների մի պատվիրակություն էր մեկնել Գերմանիա՝ տեղում ծանոթանալու գերմանական մամուլի աշխատանքին, օրենսդրությանը եւ ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգին: Այցելությունը կազմակերպել եւ ֆինանսավորել էր Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամը:

Հայկական պատվիրակության կազմում էին ԵՄԱ նախագահ Բորիս Նավասարդյանը, Հայաստանի Ժուռնալիստների միության նախագահ Աստղիկ Գեւորգյանը,«Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Հակոբ Ավետիքյանը, «Ռեսպուբլիկա Արմենիա» թերթի գլխավոր խմբագիր Վարդան Ալոյանը, «Արմինֆո» գործակալության գործադիր տնօրեն Էմանուիլ Մկրտչյանը, Երեւանի մամուլի ակումբի փորձագետ Մեսրոպ Հարությունյանը:

Հայ լրագրողներն ու փորձագետները այցելեցին կառավարական հաստատություններ (Գերմանիայի կառավարության մամուլի եւ տեղեկատվության գերատեսչություն, դաշնային մամուլի կոնֆերանս), լրատվամիջոցների խմբագրություններ («Բեռլիներ Ցայթունգ», «Դոյչե վելե», «Թագեսցայթունգ», «Թագեսշփիգել»), ինչպես նաեւ ինքնակարգավորման մարմիններ (Գերմանիայի մամուլի խորհուրդ, ժուռնալիստների միություն, «Ver.di»՝ Լրատվամիջոցների, արվեստի եւ արդյունաբերության ծառայողների եւ աշխատավորների արհմիությունների միավորում):

Վերջին երկուսը՝ ժուռնալիստների միությունը եւ «Ver.di» -ն ավելի շատ արհմիութենական գործառույթներ են վերցրել իրենց վրա, ընդ որում՝ մրցակցող կազմակերպություններ են: Ասենք «Ver.di» -ն փորձում է աջակցություն ցույց տալ լրագրողներին (եւ ոչ միայն)՝ մշակելով, ասենք, վերջիններիս աշխատանքի վարձատրության սանդղակները, որոնք պարտադիր են կատարման բոլոր խմբագրություններում: Նույն կերպ՝ նաեւ մշակում է խմբագիրների

ու այլ աշխատողների վարձատրությունների չափերի սանդղակները: Այն նաեւ իրավաբանական օգնություն է ցույց տալիս աշխատանքային վեճերի ժամանակ:

Ժուռնալիստների միությունը զբաղվում է խմբագրական կոլեկտիվ պայմանագրերի մշակմամբ եւ խմբագրություն-սեփականատերեր հարաբերությունների կարգավորմամբ: Կոլեկտիվ պայմանագրերի էությունն այն էր, որ խմբագրությունները պայմանագրեր են կնքում սեփականատերերի եւ հրատարակիչների հետ՝ որպեսզի կարողանան չեզոքացնել սեփականատերերի ազդեցությունը խմբագրական քաղաքականության վրա, ինչպես նաեւ՝ մասնակցել գլխավոր խմբագիրների ընտրությանը:

Մեզ համար, առավել հետաքրքիր է Գերմանիայի մամուլի խորհրդի (Deutscher Presserat)՝ իբրեւ ինքնակարգավորման մարմնի գործունեությունը: Որովհետեւ այն, առաջիններից մեկը լինելով Եվրոպայում, հետագայում մեծ ազդեցություն է ունեցել այլ երկրներում նման մարմինների ստեղծման ու գործունեության վրա: Մամուլի խորհրդի խնդիրներն ու գործառույթները ներկայացրեց գործադիր տնօրեն Լութց Թիլմանը:

Գերմանիայի մամուլի խորհուրդը ստեղծվել է 1956 թվականին: Մամուլի խորհրդի հիմնական խնդիրներն են՝

ա) բացահայտել լրագրության մեջ խախտումները եւ աջակցել դրանց վերացմանը,

բ) ստուգել այս կամ այն հրատարակության դեմ բողոքներն ու անհրաժեշտության դեպքում պարսավանք հայտնել,

գ) ընդդիմանալ մամուլի բնագավառի այն բոլոր միտումներին, որոնք սպառնում են տեղեկությունների ազատ փոխանցմանը,

դ) իր տեսակետներն արտահայտել եւ առաջարկություններ անել օրենսդիր մարմիններին եւ կառավարությանը:

Գերմանիայի մամուլի խորհուրդը պետությունից անկախ մարմին է, կազմված է 20 հոգուց՝ 10 հոգին լրագրողներ են, որոնց նշանակում են Գերմանիայի ժուռնալիստների միությունն ու ՁԼՄ-ների աշխատողների արհմիությունը, 10 հոգին՝ հրատարակիչներ են, որոնց նշանակում են թերթերի հրատարակիչների եւ հանդեսների հրատարակիչների միավորումները:

Գերմանիայի մամուլի խորհուրդն ընդունել է Մամուլի վարքականոնը (հրապարակախոսության սկզբունքները), որոնց նորմերը պահպանելը կամավոր իբրեւ պարտականություն իրենց վրա են վերցրել խորհրդի մեջ միավորված եւ վերջինիս գերակայությունն ընդունած բոլոր ՁԼՄ-ները:

Մինչ վարքականոնի հետ կապված խախտումների վերաբերյալ Մամուլի խորհրդի որոշումներին անդրադառնալն ասենք, որ խորհուրդն իր գործունեության ընթացքում բազմաթիվ բանաձեւեր է ընդունել՝ մամուլին առնչվող օրենքների վերաբերյալ: Այն, մասնավորապես, մի քանի զեկույցներ է պատրաստել գերմանական մամուլի համակենտրոնացման առիթով, քննադատել է մամուլի միջոցներում խմբագրական եւ գովազդային բաժինների համակցումը, դատապարտել է լրագրողների կողմից հատուկ ծառայությունների առաջադրանքների կատարումը:

Վարքականոնի դրույթների խախտումների դեպքում Մամուլի խորհուրդն ընդունում է որոշումներ, որոնք պետք է հրապարակվեն խախտումը կատարած հրատարակությունում, թեպետ՝ մամուլի խորհուրդը չի կարող որեւէ մեկին պարտադրել կատարելու իր որոշումները, դրանք պետք է կամավոր իրականացվեն: Մամուլի խորհրդի գործունեության հիմքը նրա հեղինակությունն է: Այսուհանդերձ, թերթերի եւ հանդեսների մեծ մասը հրապարկում է իր վերաբերյալ պարսավանքները:

Թեպետ ոչ այնքան ինքնակարգավորմանը վերաբերող, սակայն բավականին հետաքրքիր էր դաշնային մամուլի կոնֆերանսի գործունեությունը:

Ոչ մեծ բյուջեով (բյուջեն ձեւավորվում է դրան անդամագրված ՁԼՄ-ների տարեկան մուծումներից) եւ ընդամենը երեք աշխատակից ունեցող այս մարմինը շաբաթական երկու անգամ մամուլի ասուլիսներ է կազմակերպում, որոնց մասնակցում են դաշնային կառավարության մամուլի քարտուղարը եւ նախարարությունների մամուլի քարտուղարները: Մամուլի ասուլիսներին կարող է ներկա լինել ցանկացած լրագրող, սակայն հարց տալու իրավունք ունեն միայն հավատարմագրված լրագրողները: Սա կառավարության բաց աշխատելու մի ձեւ է, թեպետ նախաձեռնությունը եկել է ներքեւից՝ լրատվամիջոցներից:

Ասուլիսի ընթացքում նախ կառավարության խոսնակը ներկայացնում է անցած օրերի ընթացքում եղած ամենահրատապ հարցերը, ապա՝ տվյալ հարցով իրավասու նախարարությունների խոսնակները մանրամասնում են դրանք: Պետք է ասել, որ նախարարությունների խոսնակները ամենայն պատասխանատվությամբ են մոտենում այս ասուլիսներին եւ գալիս են պատրաստված, որովհետեւ լրագրողները կարող են տալ ամենաանսպասելի հարցերը:

Այս կազմակերպության փորձը, կարծում ենք, կարող է օրինակ լինել մեր կառավարության համար, մանավանդ՝ մամուլի խոսնակների իրավասության ու տեղեկացվածության առումով:

Այժմ ներկայացնենք Գերմանիայի Մամուլի խորհրդի մշակած վարքականոնը:

ՎԱՐՔԱԿԱՆՈՆ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Պատրաստել է Գերմանական մամուլի խորհուրդը՝ մամուլի ընկերակցությունների հետ համագործակցությամբ:

Նախաբան

Գերմանիայի Դաշնային Հանրապետության հիմնական օրենքով երաշխավորված մամուլի ազատությունը ներառնում է տեղեկատվության, կարծիքների եւ քննադատության անկախությունն ու ազատությունը: Հրատարակիչները, խմբագիրներն ու լրագրողները մասնագիտական գործունեության ընթացքում պետք է մշտապես զգան հասարակության առաջ իրենց պատասխանատվությունը եւ մամուլի հեղինակությունը պահպանելու իրենց պարտքը: Նրանք պետք է լրագրողական պարտականությունների կատարմանն ի սպաս դնեն իրենց ընդունակություններն ու համոզմունքները եւ բացառեն անձնական կամ կողմնակի շահերի ազդեցությունը:

Հոդված 1.

Ճշմարտությունը հարգելը եւ հասարակությանը ճշմարտացի տեղեկատվություն տալը մամուլի բարձրագույն սկզբունքներն են:

Հոդված 2.

Հրապարակման համար նախատեսված ինչպես տեքստային, այնպես էլ լուսանկարային նյութերի հավաստիությունը պետք է ստուգվի նախապես՝ հանգամանքներին համապատասխան մանրակրկիտությամբ: Մշակումը, խորագրերը կամ լուսանկարների մակագրությունները չպետք է աղավաղեն կամ նենգափոխեն նյութի իմաստը: Փաստաթղթերից մեջբերումներ անելիս պետք է լիովին պահպանել դրանց իմաստը: Չհաստատված տեղեկությունները, լուրերը եւ ենթադրությունները պետք է հստակ նշվեն՝ որպես այդպիսիք: Խորհրդանշական լուսանկարները պետք է ունենան մակագրություններ՝ տեղեկացնելով, որ լուսանկարը փաստագրական չէ:

Հոդված 3.

Եթե պարզվում է, որ հրապարակված հաղորդագրությունը կամ պնդումը անստույգ է, ապա այն հրապարակող մամուլի օրգանը կամ ռադիոն (հեռուստատեսությունը) պետք է անհապաղ համապատասխան ձեւով տեղյակ պահեն այդ մասին իրենց ընթերցողներին (ունկնդիրներին):

Հոդված 4.

Նորությունները, տեղեկատվությունն ու լուսանկարները չպետք է ձեռք բերվեն անազնիվ մեթոդներով:

Հոդված 5.

Գաղտնիությունը, որի շուրջ պայմանավորվածություն է ձեռք բերվել վստահելի զրույցի ժամանակ, պետք է խստագույնս պահպանվի:

Հոդված 6.

Մամուլում աշխատող ցանկացած անձ պետք է պահպանի զանգվածային լրատվամիջոցների հեղինակությունն ու վարկը, ինչպես նաեւ մասնագիտական գաղտնիքը, կարող է օգտվել վկայություն տալուց հրաժարվելու՝ օրենքով նախատեսված իր իրավունքից եւ չհրապարակել իր տեղեկատվության աղբյուրները՝ առանց վերջիներիս բացահայտ համաձայնության:

Հոդված 7.

Մամուլի պատասխանատվությունը հասարակության առջեւ պահանջում է, որպեսզի նյութի հրապարակումը պայմանավորված չլինի երրորդ անձերի մասնավոր կամ առեւտրական շահերով: Հրատարակիչներն ու խմբագիրները պետք է մերժեն նման փորձերը եւ հետեւեն խմբագրական նյութերի եւ գովազդային հարպարակումների հստակ սահմանազատմանը: Գովազդը, լինի դա տեքստի, լուսանկարի, թե նկարի ձեւով, պետք է հստակ նշվի որպես այդպիսին:

Հոդված 8.

Մամուլը հարգում է մարդու մասնավոր եւ անձնական կյանքը: Սակայն, եթե մասնավոր կյանքում մարդու վարքագիծը հակասում է հասարակական շահերին, ապա այն կարող է քննարկման առարկա դառնալ մամուլում: Ըստ որում, անհրաժեշտ է հետեւել, որպեսզի նյութի հրապարակումը չդիպչի որեւէ երրորդ անձի շահերին եւ նրա անձնական կյանքի առնձեռնմխելիությանը:

Հոդված 9.

Անհիմն, մասնավորապես՝ զրպարտարչական բնույթի պնդումների ու մեղադրանքների հրապարակումն անհարիր է լրագրողական պատշաճ վարվեցողության կանոններին:

Հոդված 10.

Այն տեքստերի եւ լուսանկարների հրապարակումը, որոնք իրենց բովանդակությամբ եւ ձեւով կարող են լրջորեն վիրավորել մարդկանց որոշակի խմբերի բարոյական կամ կրոնական զգացմունքները, անհամատեղելի է մամուլի պատասխանատվության սկզբունքի հետ:

Հոդված 11.

Անհրաժեշտ է հրաժարվել բռնության եւ դաժանության անհարկի ցուցադրումներից: Ռեպորտաժների հրապարակման ժամանակ անհրաժեշտ է պահպանել երիտասարդներին ավելորդ հուզումներից զերծ պահելու սկզբունքը:

Հոդված 12.

Անթույլատրելի է խտրականությունը՝ ըստ սեռի, ցեղային, էթնիկական, կրոնական, սոցիալական կամ ազգային պատկանելության:

Հոդված 13.

Հետաքննությունների եւ դատավարությունների լուսաբանությունը պետք է անկողմնակալ լինի: Ուստի ընթացիկ դատավարությունների ժամանակ մամուլը հոդվածներում եւ լուսանկարների մակագրություններում նյութը մատուցում է այնպես, որ պահպանվի չեզոքության սկզբունքը: Մինչեւ դատարանի վճիռ կայացնելը չի

կարելի կասկածյալին ներկայացնել իբրեւ մեղադրյալ: Եթե մեղադրյալը կամ դատապարտյալը երիտասարդ է, ապա նկատի առնելով նրա ապագան, հարկ է խուսափել նրա անունը կամ լուսանկարը հրապարակելուց, որ կարող է հիմք ծառայել նրան ճանաչելու համար (բացառություն են առանձնապես ծանր հանցագործությունները): Եթե լուրջ հիմնավորում չկա, ապա հարկ է խուսափել դատարանի վճիռը հրապարակելուց՝ մինչեւ այդ մասին պաշտոնական հայտարարությունը:

Հոդված 14.

Բժշկական թեմաներ լուսաբանելիս անհրաժեշտ է խուսափել նյութի սենսացիոն մատուցումից, որը կարող է ընթերցողի մեջ չարդարացված վախ կամ հույս արթնացնել: Նախնական փուլում գտնվող գիտական հետազոտությունները չի կարելի ներկայացնել իբրեւ ավարտված կամ գրեթե ավարտված:

Հոդված 15.

Որեւէ կարգի ծառայություն ընդունելը կամ մատուցելը, որ կարող է բացասաբար անդրադառնալ հրատարակչության կամ խմբագրության՝ որոշում կայացնելու ազատության վրա, անհարիր է մամուլի հեղինակության, ազատության ու խնդիրների հետ: Նա, ով թույլ է տալիս կաշառել իրեն՝ տեղեկություններ տարածելու կամ չտարածելու նպատակով, անազնիվ եւ մասնագիտական սկզբունքներին դեմ է գործում:

Հոդված 16.

Գերմանիայի Մամուլի խորհրդի կողմից արված նկատողության հրապարակումը, հատկապես՝ զանգվածային լրատվության այն միջոցներում, ում հասցեին արվել է այն, համապատասխանում է իրադարձությունների ազնիվ լուսաբանության ըմբռնմանը:

«Մամուլի ազատությունը եւ ինքնակարգավորումը» թեմայով հանդիպում Կիպրոսում

2004թ. հոկտեմբերի 7-8-ը Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայում տեղի ունեցավ Եվրոպայի անկախ մամուլի խորհուրդների դաշինքի (ԵԱՄԽԴ) 6-րդ ամենամյա հանդիպումը՝ «Մամուլի ազատությունը եւ ինքնակարգավորումը» թեմայով: Հանդիպումը կազմակերպել էր Մամուլի դեմ գանգատների կիպրոսյան հանձնաժողովը (ՄԴԳԿՀ): Հանդիպմանը նախագահում էր ՄԴԳԿՀ-ի նախագահ պրն. Անդրեաս Մավրոմատիսը:

Բաց հասարակության ինստիտուտի լրատվամիջոցների ցանցային ծրագրի աջակցությամբ հանդիպմանը մասնակցելու հնարավորություն ստացան նաեւ նախկին ԽՍՀՄ-ի եւ Արեւելյան Եվրոպայի այն երկրների (այդ թվում՝ Հայաստանի) լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչները, որտեղ ինքնակարգավորման մարմինները նոր են ստեղծվում կամ դրանց ստեղծման հնարավորությունները քննարկվում են:

Առաջին օրը հյուրընկալող կողմի բացման խոսքից եւ 2003թ. սեպտեմբերի 11-12-ը Ստոկհոլմում կայացած ԵԱՄԽԴ-ի 5-րդ ամենամյա հանդիպման արձանագրության ընթերցումից հետո իրենց ազգային զեկույցներով հանդես եկան եվրոպական տարբեր երկրների մամուլի խորհուրդներն ու լրագրողական կազմակերպությունները ներկայացնող պատվիրակները (ընդամենը 20 զեկույց, այդ թվում՝ կիպրոսյան հանձնաժողովինը): Այնուհետեւ ելույթ ունեցան «Գարդիան» թերթի «ընթերցողների խմբագիր», Մամուլի օմբուդսմանների կազմակերպության նախագահ Յան Մեյեսը («Ինքնակարգավորման մեխանիկան. «ընթերցողների խմբագրի» կամ ինտերնետային օմբուդսմանի գործունեությունը») եւ պրոֆեսոր Կլոդ-Ժան Բերտրանը (««Պահապան շների» պահապանները. մամուլի խորհուրդների գործունեության երկակի հսկողությունը՝ քննադատությունները հակադարձելու նպատակով»: Տես՝ սույն ժողովածու, էջ 23):

Ելույթներին հաջորդեցին շահագրգիռ քննարկումներ, իսկ օրվա երկրորդ կեսը նվիրվեց լրատվական դաշտի եւ ՄԽ-ների գործունեության վրա ԶԼՄ-ներին առչնվող եվրոպական հրահանգների ու եվրոպական նախադեպային իրավունքի ազդեցությանը: Զեկուցող-

ներն էին՝ «Ռոյթերս» գործակալությունը ներկայացնող Հենրի Մենիսթին («MAD-ի հրահանգների զարգացումները»), Գերմանական մամուլի խորհրդի գլխավոր տնօրեն Լութց Թիլմանսը («Եվրոպական նախադեպային իրավունքը. արքայադուստր Քերոլայնի գործը» Տես՝ սույն ժողովածու էջ 36): Օրվա ավարտին դարձյալ ծավալվեցին բուռն քննարկումներ:

Հանդիպման երկրորդ օրվա թեման մամուլի խորհուրդներն էին: Մասնակիցները ծանոթացան մամուլի խորհուրդների ստեղծման ու գործունեության կարգավորման ինչպես արեւելաեվրոպական, այնպես եւ արեւմտաեվրոպական փորձին, լսեցին տեսակետներ ՄԽ-ների հիմնախնդիրների ու հեռանկարների շուրջ: Իսկ հաջորդած զրույց-քննարկումներին ներկաները փորձեցին մասնավոր օրինակների օգնությամբ պատասխաններ գտնել իրենց հուզող հարցերին:

Հանդիպումն ավարտվեց 2005թ. ԵԱՄԽԴ-ի ծրագրերի մասին հաղորդմամբ եւ պաշտոնական փակման արարողությամբ:

Ստորեւ ներկայացնում ենք հատվածներ հանդիպման ժամանակ հնչած ելույթներից:

1. **Թիմ Թուլմինը** (Մամուլի դեմ գանգատների բրիտանական հանձնաժողովի տնօրեն) պատմեց, որ 2003թ. հաջողվել է հաղթահարել խորհրդարանական հատուկ կոմիտեներից մեկի հարուցած արգելքները, եւ որ նախորդ տասներկու ամիսները նվիրվել են մի շարք բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես, նա խոսեց Լիազոր հանձնակատարի պաշտոնի ներմուծման մասին, որն իրավասու է ուսումնասիրել այն բողոքները, որոնք ստացվել են Հանձնաժողովի կողմից գործերի քննարկման առիթով: Բացի այդ, Հանձնաժողովի հասարակական անդամների՝ արդեն իսկ մեծամասնություն կազմող խումբը 16-ի մեջ 9 հոգուց աճել է 17-ի մեջ 10-ի: Հունիսին վերանայվել է Կանոնագիրը՝ տեխնոլոգիական առաջընթացի տարրերը նկատի առնելու նպատակով, թեպետ արմատական փոփոխություններ չեն կատարվել: Զեկուցողը բացատրեց, որ Հանձնաժողովի ընդունած որոշումների առնչությամբ եղել են սակավաթիվ տարակարծություններ: Սակայն վերջին տարվա ընթացքում ամենալուրջ վտանգը ներկայացրել են դատական գործերը, ինչպես, օրինակ՝ Նաումի Քեմփբելինը եւ արքայադուստր Քերոլայնինը, որոնք վերաբերում են անհատի անձնական կյանքի անձեռնմխելիությանը: Թեպետ դեռեւս պարզ չէ, թե տեւական կտրվածքով

ինչպիսին կլինեն այս գործերի հետեւանքները, սակայն փաստը մնում է փաստ, որ շատ փաստաբաններ օգտագործում են վեջերս ընդունված այդ դատավճիռները՝ Հանձնաժողովի վրա ճնշում գործադրելու նպատակով:

2. **Ռեմսի Լանին** (Ալբանական մամուլի ինստիտուտի տնօրեն) նշեց, որ Ինստիտուտն այժմ աշխատում է երկու ուղղությամբ, մասնավորապես՝ փորձում է լրամշակել զրպարտության մասին եւ մամուլի մասին օրենքները, ինչպես նաեւ՝ վերահիրատարակել էթիկական կանոնագիրը: Նրա մատուցմամբ՝ Ալբանիայում զգացվում է մամուլի խորհրդի կարիք, քանի որ լրատվամիջոցներին ներկայումս հաճախակի են դատի տալիս:

3. **Օգնիան Սլատեւը** (ՁԼՄ-ների զարգացման բուլղարական կենտրոն) ասաց, որ այժմ աշխատում են մամուլի խորհրդի ստեղծման ուղղությամբ: Հարցի շուրջ լրագրողներն ու հրատարակիչները եկել են փոխըմբռնման: Վիճարկվողը միայն այն հարցն է, թե արդյո՞ք տպագիր եւ էլեկտրոնային ՁԼՄ-ների համար պետք է լինեն առանձին մամուլի խորհուրդներ: Վերջերս հաճախացել են լրագրերի դեմ զրպարտության մեղադրանքով դատական հայց հարուցելու դեպքերը:

4. **Ֆերնանդ Ուայդեսը** (Լյուքսեմբուրգի Մեծ Դքսության մամուլի խորհրդի փոխնախագահ) ասաց, որ Խորհուրդը հանդիսանում է պաշտոնական քննարկումներում ՁԼՄ-ները ներկայացնող կողմը, երբ անհրաժեշտ է լինում կառավարության հետ քննարկել մամուլին եւ լրատվամիջոցների ոլորտին առնչվող հարցերը: Անցած 12 ամիսներին Խորհուրդը բաժանել է լրագրողական նոր անդամատոմսեր, կազմակերպել վերապատրաստման սեմինարներ, Լյուքսեմբուրգի բժշկական խորհրդի հետ անցկացրել համատեղ քննարկումներ՝ նվիրված բժշկական լրագրության ասպարեզում էթիկայի հարցերին: Բացի այդ, Խորհուրդը կազմակերպել է «Մամուլը դպրոցում» ակցիան, իրականացրել մի շարք ներկայացուցչական աշխատանքներ, ինչպես նաեւ՝ կառավարության լրատվական ծառայության հետ քննարկել «Տվյալների պաշտպանության մասին» նոր օրենքը եւ «Մամուլի մասին» նոր օրենքը (փոխարինելու է 1869թ. ընդունված օրենքին), որը հայտնի է հետեւյալ անվանումով. «2004թ. հունիսի 8-ի օրենքը՝ կոչված ՁԼՄ-ներում կարծիք արտահայտելու ազատության ապահովմանը»:

5. **Հենրիկ Ռիիս Անդրեասենը** (Դանիայի մամուլի խորհրդի իրավական հարցերով քարտուղար) փաստեց, որ 2003թ. ստացվել է 163 բողոք՝ երբեւէ արձանագրված երկրորդ ամենաբարձր ցուցանիշը: Իսկ 2004-ի տարեսկզբից գրանցվել է 105 գանգատ: Նախագահը մանրամասն ուսումնասիրում է բողոքներն ու որոշում, թե դրանցից որը պետք է քննության առնվի, իսկ որը՝ մերժվի: Խորհուրդը ձգտում է ընդունել միաձայն որոշումներ, եւ միայն 5 գործի շուրջ է, որ անդամների կարծիքները բաժանվել են: որհուրդը անցյալ տարի 73 օր նիստ է գումարել: Նրա նպատակն է՝ մեկ գործի շուրջ որոշում կայացնել առավելագույնը 3 ամսվա ընթացքում: Բողոքը պետք է ներկայացվի իրավական շահ ունեցող անձի կամ կազմակերպության կողմից, սակայն քննարկման կարող են դրվել նաեւ հասարակության առաջարկած կամ հենց Խորհրդի սեփական նախաձեռնությամբ ստանձնած գործերը: Վերջին տարբերակը միայն մեկ անգամ է գործել՝ 1997թ.: Խորհրդին վերջերս տարբեր կողմերից քննադատում են սեփական նախաձեռնությամբ գործի քննարկումը ստանձնելու դժկամության եւ գործերի քննությունը չափից ավելի ձգձգելու համար:

6. **Իլգա Դեսգրանգեսի** (Գերմանիայի մամուլի խորհրդի իրավական հարցերով խորհրդական) խոսքով՝ 2004-ին ստացված բողոքները հիմնականում առնչվել են գաղտնալսման գործողություններին, ֆինանսական շուկաների մասին հաղորդագրություններին, անպատշաճ լուսանկարներին, «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով «Շթազիի» տվյալների մատչելիության ապահովմանը եւ արքայադուստր Քերոլայնի գործով կայացված դատավճռին:

Գերմանիայի մամուլի խորհրդի կարծիքով՝ տարատեսակ օրինագծերի ու եվրոպական դատավճիռների միջոցով Գերմանիայում գնալով սահմանափակվում է մամուլի ազատությունը:

2004-ին լայնորեն քննարկված մյուս թեման եղել է հենց ինքը՝ Գերմանիայի մամուլի խորհուրդը: Քննադատները կարծում են, թե Մամուլի խորհուրդն ընդլայնում է իր գործունեության շրջանակները, որպեսզի իր իրավական ենթակայության տակ վերցնի բոլոր ՁԼՄ-ներին:

Գերմանիայի մամուլի խորհրդին առնչվող կարեւոր փոփոխություններից է այն, որ պլենումի անդամների թիվը 20-ից աճել է 28-ի: Բողոքների հարցերով հանձնաժողովը աշխատում է երկու պալատով, յուրաքանչյուրում՝ 6-ական անդամ, որից երեքը հրատարակիչներ են, մյուս երեքը՝ լրագրողներ, որպեսզի արագացվի գանգատնե-

րի մեծ թվով պայմանավորված ծանրաբեռ աշխատանքը: Իսկ երրորդ պալատը զբաղվում է տվյալների պաշտպանության հարցերով: Անցյալ տարի գրանցվել է ընդհանուր թվով 682 բողոք: Մամուլի վարքականոնի հետ համադրված գործերի թիվը կազմել է 542: Բողոքների հարցերով հանձնաժողովը քննել է ընդհանուր թվով 235 գանգատ: Եվս 8 բողոք քննության է դրվել խմբագրական տվյալների պաշտպանության հարցերով զբաղվող հանձնաժողովում:

Եղել է 20 հրապարակային եւ 6 ոչ հրապարակային հերքում, հավանության չարժանացնելու 49 դեպք եւ 55 նախազգուշացում: Բացառությամբ երկու գործի՝ բոլոր հրապարակային հերքումները տպագրվել են վիրավորանք հասցնող հրատարակության էջերում:

Լույս են տեսել ու 550 խմբագրությունների շրջանում բաժանվել Խորհրդի որոշումներն ամփոփող տեղեկագրերը, որոնք անվճար տրամադրվել են նաեւ հասարակության ներկայացուցիչներին:

Օգոստոսին հրատարակված տարեգիրքը գլխավորապես անդրադառնում է խմբագրական անկախության հարցին: Սեպտեմբեր ամսին տեղի են ունեցել դաժանություն եւ բռնություն պատկերող լուսանկարների վերաբերյալ հասարակական լսումներ:

7. **Պիտեր Ստուդերը** (Շվեյցարական մամուլի խորհրդի նախագահ) խոսեց արդարության սկզբունքի՝ իբրեւ ԶԼՄ-ների էթիկայի անհրաժեշտ բաղադրիչի մասին՝ մանրամասն ներկայացնելով, թե տարբեր լրատվամիջոցների տեսակետից ի՞նչ ասել է «արդարություն»: Նա նշեց, որ արդարության սկզբունքը չպետք է շփոթել «օբյեկտիվության» հետ: Արդարությունը նշանակում է՝ մյուս կողմին եւս ընձեռել հիմնավորված պատասխան տալու իրավունք ու հնարավորություն: Շվեյցարական մամուլի խորհուրդը երբեք չի ճանաչել «օբյեկտիվ» լինելու պարտավորությունը՝ այնքանով, որքանով հասարակությունը հնարավորություն ունի միմյանցից զանազանել փաստերն ու կարծիքը: Այս հանգամանքը նկատի առնելով՝ Շվեյցարական մամուլի խորհուրդը նոր հրահանգ է հավելել իր Կանոնագրին, որով լրագրողներից պահանջում է մարդկանց հնարավորություն տալ՝ արտահայտելու իրենց տեսակետները սեփական անձի դեմ լուրջ մեղադրանքների վերաբերյալ:

8. **Յեհիել Լիմորը** (Իսրայելի մամուլի խորհրդում հասարակայնության ներկայացուցիչ) վկայեց, որ Խորհրդի վարչությունը, որը կազմված է հրատարակիչների (40%), լրագրողների (30%) եւ հասարակության (30%) ներկայացուցիչներից, ամեն տարի ստանում է միջին հաշվով 70-100 բողոք: ՄԽ-ն օգնում է օրենքի պարտադ-

ռանքներից ԶԼՄ-ների պաշտպանությանը: Իսրայելի մամուլի խորհուրդը ներկայումս ճգնաժամ է ապրում, քանզի մնացել է առանց նախագահի, որը պետք է ընտրվի հանրության շարքերից: Այս հարցում գոյություն ունի առճակատում, քանի որ տվյալ տեղի նկատմամբ հավակնություն ունեն հրատարակիչները, մինչդեռ հասարակայնության ներկայացուցիչները չեն պատրաստվում զիջել:

9. **Լեւան Ռամիշվիլին** (Վրաստան) պատմեց, թե ինչ ջանքեր են գործադրվում մամուլի խորհրդի ստեղծման ուղղությամբ, որին, սակայն, խոչընդոտում է լրատվամիջոցների միջեւ առկա մրցակցությունը: Լրագրողները ներկայումս աշխատում են կատարելագործել տպագիր ու էլեկտրոնային ԶԼՄ-ներին վերաբերող օրենսդրությունը, ինչպես նաեւ՝ բարեփոխել վիրավորանքի եւ զրպարտության մասին օրենքը:

10. **Թիինա Կաալեպը** (Էստոնիայի մամուլի խորհրդի նախագահ) ներկայացրեց, որ 16 հոգուց բաղկացած վարչությունը (8 հոգի ԶԼՄ-ներից, 4 լրագրող եւ 4 փորձագետ ու իրավաբան) տարեկան միջին հաշվով քննում է 100 գործ: Բողոքներն առավել հաճախ վերաբերում են անձնական կյանքի անձեռնմխելիությանը, լուսանկարներին եւ գլխագրերին:

11. **Ֆլիպ Վոետսը** (Բելգիայի ֆլամանդախոս հատվածի համար գործող մամուլի խորհուրդ) ասաց, որ 2002թ. հիմնադրված այս Խորհուրդը միավորում է հրատարակիչների, լրագրողների եւ լրատվական ճյուղին չառնչվող մասնագետների 6-ական ներկայացուցիչների: Նախորդ տարի այն ստացել է 45 բողոք՝ հիմնականում կապված անձնական կյանքի անձեռնմխելիության, հանցագործության եւ դժբախտ պատահարների հետ: Այդ բողոքներից 20-ը հարթվել է, իսկ 10-ի վերաբերյալ ընդունվել են որոշումներ: Բելգիայի ֆրանսիախոս հատվածի համար մամուլի խորհուրդ դեռեւս չի գործում: Ֆլամանդական խորհուրդը սերտ կապեր ունի ֆրանսիալեզու լրատվական ճյուղի հետ: Բելգիայի մամուլի մասին օրենքը քննադատվում է՝ լրագրողների տեղեկատվության աղբյուրների պաշտպանությանը տեղ չտալու համար:

12. **Տարաս Կուսմովի** (Ուկրաինայի լրագրողական էթիկայի հանձնախումբ) ներկայացմամբ՝ իրենց մոտ գրեթե անհնար է ստեղծել հանձնախումբ եւ ձեւակերպել էթիկայի կանոնագիր, քանի որ երկրում ԶԼՄ-ները խաղալիք են քաղաքական գործիչների ձեռքին ու վերահսկվում են նրանց կողմից: Կառավարությունն է թելադրում

լրատվամիջոցներին, թե ո՞ր թեմաները կարող են լուր դառնալ, իսկ որոնք՝ ոչ, եւ թե՝ ինչպե՞ս պետք է այդ լուրերը հաղորդվեն: ՁԼՄ-ների հանդեպ վստահությունը հնարավոր նվազագույնին է մոտեցել: Չնայած ներկա իրավիճակին՝ այս տարի նախաձեռնել են Լրագրողական էթիկայի հանձնաժողովի հիմնումը: Այն արդեն սկսել է բողոքներ ստանալ հանրությունից, ինչը հուսադրող է:

13. **Ներմին Դուրմոն** (Բոսնիա եւ Հերցոգովինայի մամուլի խորհրդի տնօրեն) նշեց, որ 2000թ. հիմնված Խորհուրդը սկսել է գործել 2001 թվականից: Այն կազմված է 12 անդամից, որոնցից 6-ը մամուլի ներկայացուցիչներ են, իսկ մյուս 6-ը՝ հասարակության: Խորհուրդն ունի անկախ նախագահ՝ Ռոբերտ Փինկերը, որը Մեծ Բրիտանիայի մամուլի խորհրդի միջազգային հարցերով խորհրդատուն է:

Ստացվող բողոքների մեծամասնությունը վերաբերում է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի ոտնահարմանը եւ անարդարացի լուսաբանմանը: Խորհրդի համար լուրջ խնդիր է գործունեության ֆինանսավորումը, ինչը հանգեցրել է մի որոշման, ըստ որի վարչության տեղերից 4-ը տրամադրվել է լրագրերին, որոնք դրա դիմաց պետք է ներդրում անեն Խորհրդի բյուջեում:

14. **Ֆրանկ Կուլենը** («Իռլանդիայի ազգային լրագիր»/«Նեշընալ նյուսփեյփըր ըվ Այրլընդ») հայտարարեց, որ դրական, թեպետ՝ դանդաղ, առաջընթաց է արձանագրվել մամուլի օմբուդսմանի ինստիտուտի եւ մամուլի խորհրդի ստեղծման ուղղությամբ: Դրանք կներառեն ե՛ւ ազգային, ե՛ւ տարածաշրջանային լրագրերը, ինչպես նաեւ՝ իռլանդական հրատարակությամբ բրիտանական պարբերականները: Նախաձեռնող խումբը գրեթե պատրաստ է մամուլի խորհրդի տեսակին ու կառուցվածքին վերաբերող իր վերջնական առաջարկը ներկայացնել կառավարությանը, մինչ էթիկայի հանձնաժողովն ավարտում է Կանոնագրի ամբողջացման աշխատանքը: Նշանակումների հարցերով հանձնաժողովը կզբաղվի Խորհրդի անկախ նախագահի, դրա անդամների եւ մամուլի օմբուդսմանի նշանակման հարցերով, իսկ վարչական հարցերով հանձնաժողովը պատասխանատու կլինի ֆինանսավորման մասով: Կառավարությունը խոստացել է ընթացք տալ զրպարտության մասին օրենքի բարեփոխմանը: Խորհուրդը չի լինի օրենքով հիմնված կառույց, ինչպես որ սկզբնապես առաջարկվել էր, բայց նրա գործունեությունը կճանաչվի օրենքով: 2005թ. առաջին վեց ամիսների ընթացքում կներկայացվի հիշյալ օրինագիծը, իսկ մամուլի խորհրդի ստեղծումը հույս կա ավարտել 12-ամսյա ժամկետում:

15. **Անդրեյ Ռիխտերը** (Մոսկվայի՝ ԶԼՄ-ների օրենսդրության եւ քաղաքականության ինստիտուտ) խոսեց 1998թ. հիմնված Մեծ Ժյուրիի աշխատանքների մասին: Ժյուրիի հիմնական դժվարությունն այն է, որ մեղավոր լրագրերը հրաժարվում են հրապարակել նրա որոշումները: Դրանք այնուամենայնիվ տպագրվում են որեւէ առեւտրային թերթում, որը, սակայն, բարձր վարկանիշ չի վայելում:

16. **Բորիս Նավասարդյանը** (Երեւանի մամուլի ակումբի նախագահ) պատմեց, որ Հայաստանի լրագրողները ներկայումս աշխատում են ԶԼՄ-ների ինքնակարգավորման ինստիտուտի ստեղծման ուղղությամբ: Նախկինում այս ջանքերը դիմադրության էին հանդիպում՝ երկրում առկա քաղաքական բեւեռացման եւ այն մտավախության պատճառով, թե լրագրողները կզրկվեն արտահայտվելու իրենց ազատությունից: Հիմա իրավիճակը փոխվել է, քանզի լրագրողներին հաճախ են դատի տալիս զրպարտության մեղադրանքով: Անցյալ տարվանից սկսվել է ինքնակարգավորումը լուսաբանող քարոզարշավը, որի նպատակն է՝ գտնել ինքնակարգավորման եւ մամուլի մասին առավել ազատական օրենքի, ինչպես նաեւ՝ զրպարտության ու վիրավորանքի մասին օրենսդրական դրույթների միջեւ ճիշտ հավասարակշռությունը:

17. **Յոհան Հիրշֆելդտը** (Շվեդիայի մամուլի խորհրդի նախագահ) պարզաբանեց երկրում գործող՝ մամուլի օմբուդսմանի եւ մամուլի խորհրդի երկակի համակարգի գործունեության սկզբունքները: Խորհուրդը շուրջ 40 դեպքում գործը վճռել է հօգուտ հայցվորի: Հիշատակման է արժանի «Էքսպրեսսեն» լրագրի գործը, որը տպագրել էր արտգործնախարար Անա Լինդտի սպանությունից հետո նրան խոշոր պլանով պատկերող լուսանկարներ: Նկարներում նա շատ թուլացած տեսք ուներ՝ արյան հետքերով պատված: Թերթը բացատրություն էր տվել, թե լուսանկարները երկրի պատմության մասն են կազմում: Սակայն ե՛ւ օմբուդսմանը, ե՛ւ Մամուլի խորհուրդը քննադատեցին թերթին՝ մոտիկից նկարահանված այդ պատկերների համար: Սրան հետեւեց համանման մեկ այլ գործ. քրեական իր կենսագրությամբ հայտնի մեկին ձերբակալեցին նախարարի սպանության կասկածանքով, կալանավորեցին, ապա նույն օրն եւեթ ազատ արձակեցին՝ հենց որ բռնեցին երկրորդին, որը եւ հետագայում մեղավոր ճանաչվեց այդ սպանության մեջ: Ձերբակալության ամենաառաջին իսկ շրջանում բազմաթիվ հաղորդագրություններ եղան այս երկու անձանց մասին: Առաջին անձը որեւէ կերպ չբողոքեց, մինչդեռ դատապարտյալը բողոք ներկայաց-

րեց: Օմբուդսմանը վճռեց այս գործում քննադատությամբ հանդես չգալ, իսկ Մամուլի խորհրդում նույն գործի քննարկումը դեռեւս ընթացքի մեջ է:

18. **Ջուհա Հանիհենը** (Զանգվածային լրատվամիջոցների ֆինանսական խորհրդի քարտուղար) անդրադարձավ ինքնակարգավորման ասպարեզի մի շարք ուշագրավ զարգացումների: Խորհուրդն ընտրել է նոր նախագահ, որը պաշտոնավարելու է հաջորդող երեք տարիներին: որհուրդը 2003-ին ստացել է 96, իսկ այս տարվա անցած ժամանակահատվածում՝ 94 բողոք, ուստի սպասվում է, որ դրանց թիվը մինչեւ 2004-ի ավարտը կհասնի 120-130-ի: որհրդին մտահոգություն է պատճառում ինտերնետային հրատարակությունների տեքստային գովազդը, սանձարձակ ու ամբարտավան լեզուն, հայտնի անձանց մասնավոր կյանքի վրա սեւեռվելու միտումը: Դատարանները կարծես թե հրաժարվել են որհրդի որոշումներին գնահատական տալու իրենց գործելաոճից, որը դրսեւորվեց անցյալ տարի՝ մի գործի առիթով: Այս տարեսկզբից գործողության մեջ է մտել խոսքի ազատության մասին նոր օրենքը, որը ներառում է բոլոր լրատվամիջոցները՝ տպագիր թե էլեկտրոնային, այդ թվում՝ ինտերնետային հրատարակությունները: Լրագրողների միությունը հավանություն է տվել Կանոնագրի լրամշակված տարբերակին, որը ուժի մեջ կմտնի 2005 թ. սկզբներին: Սեպտեմբերին Տամպերեում տեղի ունեցավ սկանդինավյան մամուլի խորհուրդների հանդիպումը, որտեղ քննարկվեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները՝ կապված խոսքի ազատության եւ անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ:

Ներկայումս քննարկվում է խորհրդի բարեփոխման հարցը, ու թերեւս կստեղծվի աշխատանքային խումբ, որը կզեկուցի ինքնակարգավորման համակարգի բարելավման ընթացքի մասին: Վիճարկվող տարբերակներից մեկն առաջարկում է ունենալ լրատվական էթիկայի հարցերով առանձին հանձնակատար, որը կաշխատի առավել անկախ խորհրդին զուգահեռ:

19. **Ֆիլ Մասելին** (չէր մասնակցում). ներկայացրել էր Իտալիայի Լրագրողների օրդենի միջազգային հարաբերությունների համակարգման բաժնի գրավոր զեկույցը, ըստ որի Իտալիայում լրագրողների թիվը 2004թ. հունիսի դրությամբ կազմել է 74 հազար 869 հոգի: Երեք տարիների ընթացքում (մինչեւ 2004-ի հունիսը) Օրդենը քննել է մասնագիտական եւ էթիկական կանոնագրի խախտմանը վերաբերող 64 գործ: Օրդենն իրավասու է իրականացնել մի քանի

գործողություններ, որոնցից են՝ բանավոր նկատողությունը, գրավոր նկատողությունը, ժամանակավոր կասեցումը եւ մասնագիտական շարքերից վտարումը: Նույն այս ժամանակահատվածում Լրագրողների օրդենին է ներկայացվել ընդհանուր թվով 347 գործ, որոնք չեն պահանջել կարգապահական սանկցիաներ:

20. **Պետրոս Պետրիդեսը** (Մամուլի դեմ գանգատարկման կիպրոսյան հանձնախմբի քարտուղար. հանձնախմբի անվանումը թարգմանվել է հունարենից եւ իրականում հնչում է այսպես՝ Լրագրողական էթիկայի հունական կոմիտե) հաշվետվություն ներկայացրեց Հանձնախմբի 2004 թ. կատարած աշխատանքների մասին: Մինչեւ սեպտեմբերի վերջը ստացվել է 22 բողոք, ինչը լավ ցուցանիշ է Կիպրոսի համար (թեեւ նախորդ տարվա համեմատ այն աճել է): Հանձնախումբը գնալով ավելի ու ավելի մեծ համարում է ձեռք բերում ժողովրդի շրջանում՝ իբրեւ իրավասու մի մարմին, որից կարող ես հատուցում ակնկալել, եթե քո արժանապատվությունը վիրավորել է լրատվական այս կամ այն հաղորդագրությունը: Այս գանգատներից առնվազն հինգը ստացվել է քաղաքական գործիչներից, իսկ առավել հիշարժան գործերից մեկը կապված էր Եվրամիության ընդլայնման հարցերով հանձնակատար Գյունտեր Ֆերհոյգենի՝ Կիպրոսի ԶԼՄ-ներով եթեր դուրս գալու իրավունքին: Եվրոպայի Խորհրդի՝ Մշակույթի, գիտության եւ կրթության հարցերի կոմիտեն առաջարկել էր, որպեսզի այս գործը քննի Հանձնախումբը:

Հանձնախմբի տպավորությամբ՝ հանրությունը դեռեւս լիարժեք տեղեկացված չէ ինչպես իր իրավունքների, այնպես էլ՝ Հանձնախմբի գործունեության մասին, եւ այս հարցը շուտով կդառնա իրենց քննարկման առարկա (Եվրոպայի անկախ մամուլի խորհուրդների դաշինքի այս հանդիպման հրապարակային լուսաբանումն արդեն իսկ մեծ հետաքրքրություն է բորբոքել): Հանձնախումբը կարող է քննել ուղղակիորեն գործին առնչվող մարդկանց, ինչպես եւ՝ լայն հասարակության կողմից ներկայացված բողոքները կամ սեփական նախաձեռնությամբ ստանձնված գործերը: Այն հրապարակում է որոշումներ, որոնք վիրավորող կողմը պարտավոր է տպագրել (ինչը շատ դեպքերում չի արվում), նաեւ՝ ԶԼՄ-ներին ու լրագրողներին հասցեագրված ուղեցույցներ: Առավել տարածված են բողոքները, որ առնչվում են կասկածյալների իրավունքներին, սեռական ոտնձգությունների զոհ դարձած երեխաների կամ մեծահասակների անունների բացահայտմանը (ինչը հիմնականում արվում է անուղղակիորեն կամ ոչ միտումնավոր կերպով) եւ ոչ ստույգ լրատվությանը:

Հանձնախումբը մամուլի այն փոքրաթիվ խորհուրդներից է, որոնց իրավասությունը հավասարապես տարածվում է ե՛ւ տպագիր, ե՛ւ էլեկտրոնային ԶԼՄ-ների վրա: Սա անկախ մարմին է, որը հիմնվում է էլեկտրոնային լրատվամիջոցների հրատարակիչների, սեփականատերերի եւ լրագրողների խմբերի կողմից, որոնցից յուրաքանչյուրը 13 հոգանոց վարչությունում ներկայացված է 3 անդամով: Մնացած 4 անդամներն ընտրվում են հասարակության ներկայացուցիչներից, իսկ Հանձնախմբի ներկայիս նախագահն է՝ նախկինում դատավոր, մարդու իրավունքների հարցերով փորձագետ, իրավապաշտպան պրն. Անդրեաս Մավրոմատիսը: Թեեւ օրենքով չի ամրագրված, սակայն Հանձնախմբի գոյությունը ճանաչվել է նաեւ «Ռադիոյի եւ հեռուստատեսության ղեկավար մարմնի մասին» օրենքում, որտեղ նշված է, որ այս ղեկավար մարմինը չի կարող քննել իր Վարքականոնի (որը նույնական է Հանձնախմբի Կանոնագրին) խախտման դեմ որեւէ բողոք, եթե այդ մասին չի ստացվել Մամուլի դեմ գանգատարկման կիպրոսյան հանձնախմբի (ՄԴԳԿՀ) գրավոր դիմումը:

Կլոդ-Ժան Բերտրան

«Պահապան շների» պահապանները

Արդեն 32 տարի է, ինչ ես զբաղվում եմ սրանով (ինքնակարգավորման համակարգով-խմբ.):

● Եվ ես ուրախությամբ հայտարարում եմ, որ գնալով ավելանում է մամուլի խորհուրդների (ՄԽ) թիվը.

- այսօր գոյություն ունեցող ՄԽ-ների կեսից ավելին ստեղծվել է 1990-ից ի վեր,
- դրանց մեկ երրորդը՝ 2000-ից հետո:

● Առնվազն կես դար է պահանջվել, որպեսզի այս գաղափարը թափ առնի: Ճշմարիտ հեղաշրջումները դանդաղ ընթացք ունեն: Հիմա Մ -ն կարծես թե ընկալվում է ոչ թե որպես մամուլի ազատության սպառնալիք, այլ՝ դրա պաշտպանության զենք:

ԱՅԴՈՒՀԱՆԴԵՐՁ, ես բավականին վհատված եմ, քանզի.

► **շատ տեղերում դեռեւս ընդգծված արհամարհանք ու թշնամություն կա ՄԽ-ների հանդեպ,** եւ ես ցավով պիտի նշեմ հետեւյալը. իմ կարծիքով՝

► **դրանք մասամբ արդարացված են:**

1. Դեռեւս փոքր է ՄԽ-ների թիվը, թեպետ նախկինի համեմատ զգալիորեն ավելացել է ժողովրդավարական երկրների ու ՁԼՄ-ների քանակը.

- 40-ից պակաս հիրավի համերկրային ընդգրկմամբ ՄԽ -ներ՝ աշխարհի 174 երկրում,
- ոչ մի ՄԽ Արաբական աշխարհում,
- ընդամենը երկու ՄԽ Լատինական Ամերիկայում,
- միայն երեք նահանգային ՄԽ ԱՄՆ-ում,
- ինչպես նաեւ՝ Եվրոպայի Խորհրդին անդամակցող 20-ից ավելի պետություններ, որտեղ ՄԽ չկա, ներառյալ՝ Ֆրանսիան, Լեհաստանը եւ Պորտուգալիան:

2. Մինչ ՄԽ -ն **պոտենցիալ կերպով** հանդիսանում է.

- «մեդիայի պատասխանատվության» ամենաօգտակար համակարգը,
- ՁԼՄ-ների որակի համար պայքարի ամենահզոր զենքը,

ՄԽ-ների գրանցած արդյունքները տպավորիչ չեն: Հազվագյուտ դեպքերում է նրանց հաջողվել լուրջ ազդեցություն ձեռք բերել:

Այսպես, արդյո՞ք Շվեդիայում (որը ՄԽ ունի արդեն շուրջ մեկ դար) լրագրերն ավելի լավ են ծառայում հանրության շահերին, քան Իսպանիայում (որտեղ Մ -ն նորերս է հիմնվել):

Մի քանի տարի առաջ ես հենց խորհուրդներին հարցրեցի, թե ո՞րն են համարում իրենց մեծագույն ձեռքբերումը:

Նրանց պատասխանները հուսադրող չէին. խորհուրդներից եւ ոչ մեկը չուներ այն զգացողությունը, թե որոշակիորեն նպաստել է լրատվամիջոցների բարելավմանը:

Քննադատական տեսակետներ

Երբեւէ տեսե՞լ եք մի այնպիսի գիրք, որը գովերգի ու փառաբանի ՄԽ-ները (իմից բացի): Եղած հատուկենտ գրքերն ու հոդվածներն էլ, որպես կանոն, պատճառ են դառնում, որպեսզի **քննադատության տարափ տեղա** ՄԽ-ների գլխին.

● Ըստ Ֆրանսիայում, բայց ավելի շատ՝ ԱՄՆ-ում տարածված քննադատական մի տեսակետի՝ դրանք **դավադրվել են իշխանությունների կողմից**՝ մամուլի ազատությունը սահմանափակելու նպատակով: ՄԽ-ն, պնդում են նրանք, արագորեն կվերածի տրիբունալի: Մինչդեռ նման բան այդպես էլ չպատահեց:

● Խորհուրդը մեդիա սեփականատերերի ձեռնարկած **PR (հասարակական կապերի) ակցիա** է, որի նպատակն է.

- համոզել խորհրդարանին՝ չընդունել սահմանափակող օրենքներ, ինչպես նաեւ՝

- համոզել քաղաքացիներին, թե իրենց մտահոգում է հանրությանը բարձրորակ ծառայությունների մատուցումը:

Նման կարծիքներ կարելի է լսել, ասենք, Մեծ Բրիտանիայում:

● Ամենուր էլ քննադատները նշում են, որ **հանրությունը գաղափար անգամ չունի** ՄԽ-ների գոյության մասին, մինչեւ իսկ՝ տարիներով գործունեություն ծավալած լինելու դեպքում, կամ՝

- եթե անգամ տեղյակ է դրանց գոյության մասին, ապա չգիտի՝ ինչի՞ համար են դրանք, եւ

- եթե գիտի էլ, ապա չի հավատում, թե դրանք կարող են բարեփոխել ՁԼՄ-ները...

●... հիմնականում **«ատամ չունենալու»** պատճառով՝ խորհուրդը չունի պատժելու իրավազորություն: Ուստի այն անօգուտ է թվում:

- Լավ ՁԼՄ-ները ՄԽ-ի կարիքը չունեն,
- վատերը ուշադրություն չեն դարձնում նրան:

● Առավել քաջատեղյակ դիտորդներն այն կարծիքին են, թե տիպական ՄԽ-ն **հազվադեպ է իր տրամադրության տակ բավարար գումարներ ունենում**՝ իր գործունեությունը պատշաճ կատարելու համար,

- ահա այսպիսի դատավճիռ արձակեցին Արքայական զույգ հանձնաժողովները՝ «հանգուցյալ» Բրիտանական մամուլի խորհրդի առնչությամբ:

● <u>Մասամբ</u> միջոցների սղության պատճառով, իսկ <u>հիմնականում</u>՝ ելնելով իր քաղաքականությունից, ՄԽ-ն **չի զբաղվում առավել լուրջ գործերով**՝ պարզապես որովհետեւ.

- դրանց շուրջ բողոքներ չեն ներկայացվում,
- ՄԽ-ն մոնիտորինգի չի ենթարկում լրատվամիջոցները:

Հիմա անհրաժեշտ է տալ **ելակետային մի հարց**.
արդյո՞ք մամուլի խորհուրդը սոսկ բողոքների քննարկման բյուրո է, թե՞ պետք է լինի դրանից ավելին:

Բողոքների քննարկման գործակալությունը.

■ հանձն է առնում լուծել մի քանի անհատ քաղաքացիների եւ որեւէ լրագրի կամ հեռարձակողի միջեւ ծագած տարաձայնությունները,

■ չկարողանալու դեպքում՝ այն քննարկում է, թե որքանով էր գանգատն արդարացված, եւ հրապարակում այդ մասին իր տեսակետը:

Մերօրյա ՄԽ-ներից շատերը իրականում քիչ բանով են տարբերվում գանգատարկման հաձնաժողովներից:

Այսօրինակ խորհուրդը հիմնադրվում է տվյալ ճյուղի եւ կամ մասնագիտության կողմից՝

1 - մասամբ խուսափելու համար ծախսատար դատավարություններից,

2 - հիմնականում խուսափելու համար օրենքի պարտադրանքով մի ինչ-որ վերահսկող գործակալության ստեղծումից, քանզի, ինչպես գիտեք, շատ քիչ թվով ՄԽ-ներ կան, որ ստեղծվել են կամավորական սկզբունքով. օրենսդիրները նախ պետք է սպառնալից աղմուկ-աղաղակ բարձրացնեին՝ մեդիա ոլորտը օրենքով կարգավորելու մասին, սովորաբար՝ վրդովված հանրության ճնշման ներքո:

Նման ՄԽ -ները հիմնականում **հաջողությամբ են իրականացնում** այս երկու սահմանափակ առաքելությունները,

ԲԱՅՑ

- նրանց անտեսում կամ դաժանորեն քննադատում են, կամ էլ՝
- ԶԼՄ-ների որակը ՄԽ-ների միջոցով այնքան էլ չի աճում:

Իսկ ի՞նչ կարելի է ասել ճշմարիտ մամուլի խորհրդի մասին:

Ահա թե ինչպես եմ խնդիրը պատկերացնում ես, եւ ոչ միայն ես, այլ նաեւ՝ այնպիսի հեղինակավոր կազմակերպություններ, ինչպիսիք են՝

- Բրիտանիայի Մամուլի հարցերով արքայական 3 հանձնաժողովները,

- ԱՄՆ-ի Հաքչինզի հանձնախումբը եւ «Թուենթիրթ սենչրրի» (20-րդ դար) հիմնադրամը.

Ճշմարիտ մամուլի խորհուրդը օգտվում է այն հանգամանքից,

► որ **միավորում** եւ ներկայացնում է.

- մարդկանց, ովքեր ունեն տեղեկացնելու իրավազորություն,

- նրանց, ովքեր ունեն տեղեկացնելու ձիրք եւ ունակություն, ու նաեւ՝

- նրանց, ովքեր ունեն տեղեկացված լինելու իրավունք,

► որ հանդիսանում է մշտական **հաստատություն՝**
ժողովրդավարական, անկախ, ճկուն,
բազմագործառնական, անվնաս.

► որ **իր միակ նպատակը** ՁԼՄ-ների կողմից հանրությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավումն է:

ՀԵՏԵՎԱԲԱՐ, այն կարող է իրեն թույլ տալ անել ավելին, քան սոսկ գանգատների քննարկումն է.

◆ այն պիտի **ծառայի՝ իբրեւ ժողովրդավարության խորհրդանիշ**:
Մամուլի խորհրդի նիստերին մասնակցելիս՝
- սեփականատերերն ընդունում են, որ իրենց աշխատողները շատ հարցերում խոսքի իրավունք ունեն,
- լրագրողներն ընդունում են, որ ՁԼՄ-ներից օգտվողները եւս ունեն իրենց տեսակետները լսելի դարձնելու իրավունք:

ՄԽ-ն հրապարակում է այն իրողությունը, որ լրատու ՁԼՄ-ները.
- ականջալուր են հանրությանը,
- պատրաստ են հաշվետվություններ ներկայացնել հասարակությանը:

◆ ՄԽ-ն պետք է ձգտի բարելավել մեդիա ծառայությունների որակը՝

1 - **իրականացնելով** մամուլի **մոնիտորինգ (դիտարկում)**. ի վերջո, ամենավատ բանը, որ մամուլը կարող է անել, հենց որեւէ բան չանելն է: Իսկ շարքային քաղաքացին ավելի հաճախ չի կարողանում հեշտությամբ նկատել այդ բացթողումները,

2 - **խրախուսելով հետազոտությունների անցկացումը**՝ որպեսզի պարզի, թե ինչպե՞ս են իրականում գործում ՁԼՄ-ները, ի՞նչ ազդեցություն ունեն, ի՞նչ սպասելիքներ ունեն ՁԼՄ-ներից քաղաքացիները եւ այլն,

3 - աջակցելով **այլընտրանքային Մ*Պ*Հ*-ների** (մեդիայի պատասխանատվության համակարգ) **մշակմանը**: Եվ իհարկե՝

4 - **ճնշում գործադրելով իշանությունների վրա**՝ որպեսզի նրանք չքվեարկեն ՁԼՄ-ների համար ոչ նպաստավոր օրենքների օգտին կամ՝ ընդունեն նպաստավոր օրենքներ:

Այլ կերպ ասած՝ Մամուլի խորհուրդը կարող էր ԶԼՄ-ների բարեփոխման հրաշալի գործիք լինել, բայց ներկայումս այդպիսին չէ:

Որտեղի՞ց կարող են ստացվել բացասական արձագանքներն ու բարեփոխման առաջարկները:

● Դրանք ՀԱՋԻՎ ԹԵ ստացվեն հանրությունից, որը քիչ բան գիտի ՄԽ-ների մասին եւ ինքն իրեն անզոր է համարում:

Քննադատությունն ավելի շատ կհնչեցնեն.

● **հրատարակիչներն ու լրագրողները**, ովքեր չեն սիրում, որ իրենց.

- հսկում ու գնահատում են, կամ որ՝
- երբեմն մեղադրում են ոչ պատշաճ վարքագիծ դրսեւորելու համար:

● եւ գլխավորապես՝ **դասախոս-գիտնականները**, ովքեր չափից ավելին են ակնկալում եւ հակված են հիասթափության[1]. նրանք վերլուծության են ենթարկում ՄԽ-ների գործունեության բոլոր բացթողումները, բայց քարոզելու համար որեւէ այլընտրանք չունեն:

Լավ կլիներ, եթե գնահատումն իրականացվեր.

● **հենց իր՝ ՄԽ-ի կողմից**. այն պետք է կանոնավորապես ինքն իրեն ստուգման ենթարկի ու ձգտի վերափոխումների՝ իր ներկայացուցչականությունը, կշիռը եւ արդյունավետությունը բարելավելու նպատակով,

● նույն երկրում առկա **այլ ՄԽ-ների կողմից**. ՄԽ-ն սովորաբար ստեղծվում է համապետական, ազգային մակարդակով: Մյուսները պետք է գործեն տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում: ԲԱՅՑ սա իրատեսական չի թվում,

● **լրատվամիջոցների պատասխանատվության այլ համակարգերի (Լ*Պ*Հ) կողմից**, օրինակ՝ որեւէ լրագրի կողմից կարող է նշանակվել օմբուդսման:

Լ*Պ*Հ*-ները երբեք չեն մրցակցում. նրանք տարբեր ուղիներով ձգտում են հասնել միեւնույն նպատակին: Եվ նրանցից յուրաքանչյուրը պետք է հետեւի,

1 Տե՛ս David PRITCHARD (*ed.*), *Holding Media Accountable: Citizens, Ethics and the Law*, Bllomington, Indiana UP, 2000 (Դեյվիդ Պրիտչարդ, (խմբ.), «Մեդիային պատասխանատվության կանչելու հարցը. քաղաքացիներ, էթիկա եւ օրենք», Բլումինգթոն, Ինդիանա, UP, 2000)

թե ի՞նչ են անում մյուսները...

ԱՅԴՈՒՀԱՆԴԵՐՁ.....

Խնդիրը ոչ այնքան ՄԽ-ներին հսկելն է,

որովհետեւ սխալներ գործելու առիթները շատ չեն: Նրանց խնդիրը՝

ՈՉ ԹԵ այն է, որ նրանք գրաքննում են ԶԼՄ-ներին կամ վախենում նրանցից եւ

ՈՉ ԷԼ՝ այն, որ նրանք ենթարկվում են հանիրավի ճնշումներին:

Նրանց խնդիրը, ինչպես որ, ըստ իս, պարզ դարձավ իմ խոսքից, այն է, թե նրանք ի՞նչ ՉԵՆ ԱՆՈՒՄ:

Հետեւաբար, որպես եզրակացություն,

Կցանկանայի մի քանի առաջարկություն անել, որոնք բխում են խնդրի արմատներից.

1. Բոլոր ՄԽ-ները պետք է **խառը բնույթ/կազմ** ունենան (ինչպես որ ունեն դրանցից շատերը):

2. ՄԽ-ները պետք է ներառեն **բոլոր ԶԼՄ-ները** (ինչպես որ ներկայումս անում է դրանց 60%-ը):

3. ՄԽ-ները պետք է շատ ավելին անեն՝ իրենց գոյությունն առավել հրապարակային դարձնելու համար:

4. Բոլոր ՄԽ-ները պետք է նախաձեռնեն գործերի քննարկումներ, ու հետեւաբար նրանք պետք է.

- կամ իրենք մոնիտորինգի ենթարկեն ԶԼՄ-ները,
- կամ կազմակերպեն մեկ այլ դիտորդական կառույցի կողմից (օրինակ՝ որեւէ համալսարանի շրջանակում) դրա իրականացումը:

Սա կարող է ծախսատար լինել, ուստի այս ամենը հավելյալ պատճառ է, որ՝

5. բոլոր ՄԽ-ները պետք է լավ ֆինանսավորված լինեն: Նյութական միջոցները պետք է ստացվեն բազում աղբյուրներից, որպեսզի ապահովեն անկախությունը.

- լրատվական ընկերություններից, որոնք, վախենալու դեպքում, կարող են առատաձեռն լինել,
- պետական-կառավարական գործակալություններից,
- հիմնադրամներից,
- ոչ լրատվական միավորումներից,
- հանրային եւ մասնավոր կազմակերպություններից,
- արհեստակցական միություններից:

6. Այս գումարներով պետք է ֆինանսավորվի ՄԽ-ների՝ գանգատների քննարկմանը չառնչվող գործունեությունը, որոնցից է, օրինակ,

- լրատու ԶԼՄ-ների դաշտի մասին հաղորդումների պատրաստումը,
- հետազոտության հանձնարարումը,
- վտանգավոր միտումների վերաբերյալ հանրությանը նախազգուշացնելը:

7. Նման «չառնչվող գործունեության» այս կամ այն տեսակը պետք է նպաստի պատասխանատվության համակարգերի ընդարձակ ցանցի ստեղծմանը (սկսած տարածաշրջանային եւ տեղական ՄԽ-ներից)՝ նրանց աշխատանքներին օժանդակելու եւ աջակցելու նպատակով:

8. Եվ վերջապես, ՄԽ-ները պետք է միջազգային մակարդակով ավելի սերտորեն համագործակցեն՝

- միմյանց օգնելու,
- նոր ՄԽ-ների ստեղծումը խթանելու, հատկապես՝ նոր ձեւավորվող ժողովրդավարական երկրներում:
- միավորելու ուժերը՝ կարեւոր հարցերի շուրջ քարոզարշավների կազմակերպման նպատակով:

ՄԽ-ն չի կարող միայնակ իրականացնել իր գործը. մենակ մնալու դեպքում այն չի կարող դառնալ ԶԼՄ-ների առաջընթացը խթանող արդյունավետ գործիք:

Զուզեպե Միֆսուդ Բոնիչի
(Մալթա)

Խոսքի ազատության էթիկական կողմը եւ հետեւանքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում

1764թ. Իտալիայում լույս տեսավ մի գրքույկ՝ «Dei Delitti e delle pene» («Հանցանքների եւ պատիժների մասին») վերնագրով, որի հեղինակն էր Չեզարե Բեքարիա անունով մի բարերար: Հաշված տարիների ընթացքում գիրքը լայն տարածում գտավ Եվրոպայում՝ հիմք դնելով քրեական իրավունքի մարդասիրական բարեփոխումներին, որոնք դանդաղ, բայց հաստատ քայլերով անցան աշխարհի բոլոր երկրներով՝ ընդհուպ մինչեւ նախորդ հարյուրամյակի վերջին տարիները: Բայց սա չի նշանակում, թե այդ ընթացքը կանգ է առել:

Գրքի առանցքային գաղափարն այն էր, որ հանցանքների համար նախատեսված պատիժները պետք է հնարավորինս մեղմ լինեն: Սա ճիշտ հակառակն էր այն մոտեցման, որը դարեր շարունակ համարվել էր սոցիալ-քաղաքական պատշաճ անհրաժեշտություն, եւ ըստ որի՝ պատիժը պետք է արտացոլեր հանցանքի ողջ ծանրությունն ու զազրելիությունը: Հնարավորության դեպքում պատիժը պետք է ի կատար ածվեր հասարակության աչքի առաջ. հանցագործին ձաղկում էին գլխավոր հրապարակներում կամ խցկում փայտյա պատժագործիքի մեջ, կամ էլ՝ կախ էին տալիս երկաթյա վանդակներից ու մի տեւական ժամանակ թողնում այդպես արեւի, քամու, անձրեւի տակ: Իսկ առավել ծանր ու լուրջ համարվող հանցանքների դեպքում կախաղան հանելն ուղեկցվում էր պրկոցի վրա մարդուն տանջելով ու քառատմամբ:

Բացառությամբ այն հանցանքների, որոնք համարվում էին արքայազնի անձի դեմ ուղղված, պատիժը մյուսների դեպքում հիմնականում կոչված էր հագուրդ տալ հանցագործության զոհի կամ զոհերի ու նրանց մերձավորների վրեժխնդրությանը կամ՝ բավարարել նրանց քինախնդրական զգացումները:

Այս միտումը սկսեց շրջադարձ արձանագրել 19-րդ դարում եւ ամբողջովին հասունացավ 20-րդ հարյուրամյակում: Եթե հպանցիկ դիտարկենք դրա առաջընթացը մեզանում, ապա Մալթայում այն սկսվեց ֆիզիկական պատժի բոլոր ձեւերի վերացմամբ եւ 1854թ. ընդունված Քրեական օրենսգրքի համեմատ բանտային եզրերի ողջ ցանկի լիակատար վերանայմամբ: Բանտային եզրաբանության համար միակ անսովոր որակումը «ծանր աշխատանք»-ն էր, ինչպես նաեւ՝ մարդասպանությանն ու մեկ-երկու այլ ծանր հանցանքներին հաջորդող մահապատիժները:

Նախորդ դարասկզբին կիրառության մեջ դրվեց առաջին անգամ հանցանք գործածների համար պայմանական պատժաչափի սահմանման գաղափարը, որը ժամանակի հետ է՛լ ավելի մեղմացավ ու ընդարձակվեց: Սրան հաջորդեց փորձաշրջանի ինստիտուտի ներմուծումը, երբ մեղսագործը հետագա ազատություններ էր ստանում՝ մինչեւ իսկ այնպիսի ոճիրի համար, որի դեպքում անցյալում ծանր պատժակալանք էր հասնում:

Այս ամենն ասվեց՝ ցույց տալու, թե ինչպես է Օրենքը այս վերջին երկու հարյուրամյակների ընթացքում հետեւողականորեն ձգտել արժեզրկել հանցանքի գաղափարն ու տարրալուծել պատիժ կոչվածը: Քրեական հարցերում հոգածության կենտրոնը հիմա զգալիորեն տեղաշարժվել է՝ ըմբոստ ոճրագործին ընդառաջ ու հօգուտ նրա, եւ գործնականում պատիժը ներկայումս հանգեցվել է սոսկ հասարակության մեջ ազատ տեղաշարժի, այսինքն՝ ազատության սահմանափակմանը: Զոհն այսօր ավելի ու ավելի քիչ է կարեւորվում: Գլխավորն այն է, որ արդար հատուցում ստանալու, չասենք՝ վրեժխնդրության, նրա ծարավը իրականում այդպես էլ չի բավարարվում ու չի հագենում:

Այս պատճառով բավականին սասանվել են Օրենքի հիմքերը: Որքան էլ արտառոց է, բայց թեպետ օրենքներն ու կանոնները առատորեն հորդում են պետական օրենսդիր մարմինների գրչի տակից, սակայն մարդկային անպատշաճ վարքագիծը, որի օրենքով կարգավորումը հեշտ բան չէ, ծնունդ է տվել մի երեւույթի, ինչն այնքան էլ էական չի համարվել մարդկային վարքի հանրային դրսեւորումների կարգավորման տեսակետից. այդ երեւույթը էթիկան է: Հենց որ շեշտադրումը տեղափոխվեց աշխարհիկ պետության վրա, բարոյականությունն ու բարոյական վարքագիծը մղվեցին զուտ անձնական ոլորտ եւ անկարեւոր դիտվեցին հասարակական կյանքի համար:

Մինչդեռ իրականում տեղի էր ունեցել հետեւյալը. երբ Օրենքը հրաժարվեց իր պարտականությունից, այն է՝ կարգավորել իր տեսակետից այլեւս անօրեն ու արգելված չհանդիսացող որոշակի վարքագիծը, ապա սրա հետեւանքով առաջացած վակուումը, այնուամենայնիվ, սկսեցին անընդունելի համարել: Արդյունքը եղավ այն, որ գործունեության շատ ու շատ ոլորտներում ներկայումս սնկի նման բազմացել են տարատեսակ վարքականոնները՝ առեւտրային ընկերությունների ղեկավար խորհուրդների համար մշակված լինեն դրանք, թե՝ մասնագիտացված այլեւայլ մարմինների կամ սրանց անդամների գործունեության: Գնալով ավելի եւս պարզ է դառնում, որ օրենքով չարգելված վարքը անօրեն չէ: Այդուհանդերձ չի կարելի ասել, թե այս բացթողման պատճառով այն ընդունելի է համարվում:

Այս երկար, բայց անհրաժեշտ նախաբանից հետո կարող եմ ուշադրությունս սեւեռել մեզ հետաքրքրող ոլորտի՝ լրագրողական էթիկայի վրա: Այս ընթացքում հատուկ հղում կանեմ այն փոփոխություններին, որոնք ծնունդ են առել «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին» եվրոպական կոնվենցիայի եւ Կոնվենցիան մեկնաբանող՝ Ստրասբուրգի եվրոպական դատարանի վճիռների ազդեցության տակ: Մենք պարտավոր ենք սա անել, քանզի անկախ այն բանից, որ Եվրոպայում գոյություն ունեն տարբեր օրենսդրություններ, Կոնվենցիան եւ Դատարանը հիմա ընդհանուր են Եվրոպայի խորհուրդը կազմող բոլոր 44 պետությունների համար:

Եթե վերը շարադրվածի տեսանկյունից դիտարկելու լինենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արձանագրված իրավիճակը, ապա կպարզվի, որ հիմա Օրենքն իսկապես որ դադարել է պաշտպանել զոհին այն ամենից, ինչը որոշ ժամանակ առաջ որակվում էր որպես զրպարտչական խոսք: Բավականաչափ հանրահայտ մի գործում «ստորագույն պատեհապաշտություն», «անբարո» եւ «ոչ արժանապատիվ» արտահայտությունները, որոնք տեղական օրենքով անվանարկող եւ ըստ այդմ՝ քրեորեն պատժելի էին համարվել, թույլատրելի հռչակվեցին ՝ ի հարգանս Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի Հոդված 10-ով պաշտպանված՝ խոսքի ազատության հիմնարար իրավունքի: Դատարանը որոշեց, որ օրենքի ներկայիս պահանջով այս արտահայտությունները, որոնք նախկինում որակվում էին զոհին զրպարտող (եթե, իհարկե, խոսքը չէր գնում հասարակական դեմքի եւ փաստերով

ապացուցված հանգամանքների մասին), հիմա պետք է դիտարկվեն լրագրի այն հոդվածի ընդհանուր համատեքստում, որտեղ դրանք հայտնվել են՝ նկատի առնելով նաեւ տվյալ գործն իր ամբողջության մեջ: Դատավճիռը հաստատեց այժմ արդեն քաջ հայտնի այն բանաձեւը, թե խոսքի ազատությունը տարածվում է նաեւ այն ամենի վրա, ինչը «վիրավորում է, ցնցում կամ անհանգստացնում»:

Ճիշտ է, Հոդված 10-ի կետ 2-ում ամրագրված է, որ. «Այդ ազատությունների իրականացումը, որը պարտավորություններ ու պատասխանատվություն է սահմանում, կարող է կապված լինել ձեւականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանման պատժահրահանգների հետ, որոնք նախատեսված են օրենքով եւ անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը պաշտպանելու, **<u>այլ անձանց վարկը կամ իրավունքները պաշտպանելու</u>**, գաղտնի ստացված տեղեկության հրապարակումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը ապահովելու նպատակով»: Սակայն բանաձեւը, որը թույլատրում է այն, ինչը «վիրավորում է, ցնցում կամ անհանգստացնում», բարեհաջող կերպով սասանում է այլ, հատկապես՝ հասարակական կյանքում ներգրավված անձանց վարկի պաշտպանության հիմքերը: Հիմա դրությունը փրկել կարող է միայն էթիկան: Հիրավի, ողջունելի է այն հասարակության համար, որտեղ մենք ապրում ենք, որ լրագրողներն իրենք են սկսել գիտակցել, թե իրենց կողմից պատշաճ կամ անպատշաճ համարվող վարքագծի ինքնակարգավորումը նպաստավոր է ինչպես լրագրության, այնպես եւ ընդհանուր առմամբ հասարակության համար: Սա էթիկապես լավ է ե՛ւ ավանդական, ընդունված առումով, ե՛ւ Կանտի քարոզած փիլիսոփայության տեսակետից, որն ասում էր. գործի՛ր այնպես, ինչպես որ դու ինքդ պատշաճ կհամարեիր, եթե լինեիր այդ գործողության հասցեատերը, այլ ոչ թե՝ կատարողը:

Երկրորդ օրինակը, որով կուզենայի ցուցադրել, թե ինչպե՞ս է Օրենքը նահանջել եւ ինչո՞ւ էր անհրաժեշտ էթիկային լցնել առաջացած վակուումը, վերցված է անգլիական այն գործից, որը հայտնի է ««Օբզերվերն» ու «Գարդիանը» ընդդեմ Մեծ Բրիտանիայի» անունով: Այս լրագրերը սկսել էին հաղորդագրություններ տպագրել Ավստրալիայի դատարաններից մեկում ընթացող մի դատավարու-

թյան մասին, որն առնչվում էր հետագայում հրատարակված «Լրտեսներ որսացողը» վերնագրով գրքի ձեռագրի բովանդակության բացահայտումներին: Ներկայացվել էին Անգլիական անվտանգության ծառայության աշխատանքին վերաբերող զանազան մանրամասներ՝ անպատշաճ, անգամ քրեաբարո պահվածքի մասին լուրջ մեղադրանքներով: Գլխավոր դատախազը Անգլիայի դատարաններից պահանջեց դատական արգելք կիրառել այդ լրագրերի դեմ՝ այդ նյութերի հետագա հրապարակումը թույլ չտալու համար: Սակայն չէր հասցրել այս արգելքը կիրառվել, երբ այլ թերթերում սկսեցին հայտնվել համանման բովանդակության հրապարակումներ: Միացյալ Նահանգներում տպագրվեց բուն գիրքը, իսկ Լոնդոնում լույս տեսնող «Սանդի թայմս»-ը ձեռնարկեց գրքի մաս առ մաս հրատարակումը: Արգելակիչ որոշումներն այնուամենայիվ ուժի մեջ մտան, բայց երբ անգլիական դատարաններ ներկայացված բոլոր հայցերը տապալվեցին, հարցը ներկայացրեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Այստեղ ինձ ցնցել է մի հանգամանք, որն ամենից շատ է առնչվում ձեզ ներկայացվող սույն թեմային. Դատարանը ոչ միայն պաշտպանեց թերթերի հիմնարար իրավունքն ու խոսքի ազատությունը՝ տպագրելու գիրքն ու դրան վերաբերող նյութերը, ինչն, ըստ էության, սպասելի էր: Հատուկ շեշտվել էր իրատեսական այն փաստարկը, թե օրենքները, որոնք նպատակ ունեն արգելանքների միջոցով պաշտպանել անգամ բացահայտ զրպարտչական, անվանարկող կամ այլ տեսակետից ակնհայտորեն առարկելի նյութերի հրապարակումը, այսուհետ չեն կարող գործնական ու արդյունավետ համարվել, քանզի ներկայիս համաշխարհային հաղորդակցության միջոցների առկայության պարագայում ՁԼՄ-ներն այլեւս չեն կարող պարփակվել ազգային-պետական սահմանների շրջանակում:

Ձեր ուշադրությանը ներկայացրած իմ այս երկու օրինակները ցույց են տալիս Օրենքի անկարողության զույգ «երեսը»՝ պաշտպանելու նրանց, ովքեր, կարծում եմ՝ կհամաձայնեք ինձ հետ, լրագրողական ոչ պատշաճ վարքի զոհն են: Առաջին դեպքում սա արվում է բուն Օրենքի մեկնաբանության միջոցով, ինչը լայն բացել է դռները շահարկման համար: Իսկ երկրորդ դեպքում՝ ընդունելով, որ այն բնավ չի կարող գործնական ու արդյունավետ լինել, երբ հարցը վերաբերում է հաղորդակցության միջոցների համաշխարհային սփռմամբ ի հայտ եկած հիմնախնդիրների դեմ պայքարին:

Օրենքի թերությունները պետք է շտկվեն, եւ այս պահին ինձ թվում է, թե մարտահրավերը կարող են ընդունել միայն նրանք, ովքեր եռանդուն գործունեություն են ծավալել այս ասպարեզում: Այս առումով կարծես թե հույսեր կարելի է կապել միայն ինքնակարգավորման ընդունման հետ, որի հիմքում ընկած կլինեն լրագրողական համընդհանուր էթիկայի կոդեքսի կանոնների ընտրությունը եւ դրանց շուրջ ձեռք բերված համաձայնությունը:

Լութց Թիլմանս
իրավաբան եւ Գերմանիայի մամուլի խորհրդի
(Deutscher Presserat) գլխավոր տնօրեն

«Քերոլայնի» գործը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

Գերմանիայի մամուլի խորհրդի դիտարկմամբ

Վերջին տասը տարիներին Հանովերի արքայադուստր Քերոլայնը՝ Մոնակոյի հպատակ, առավել նախանձախնդրությամբ, քան որեւէ մեկը, լծվել է հանրահայտ անձանց լրատվամիջոցներից պաշտպանելու գործին: Աջակցությամբ իր փաստաբան Մատիաս Փրինցի, որն այս ընթացքում հասցրել է նույնքան հանրաճանաչ դառնալ, նա արդեն հնարավորություն ունի արգելել իր մասնավոր կյանքին վերաբերող ցանկացած հաղորդագրություն, մասնավորապես՝ դեղին մամուլում՝ ի հետեւանս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) 2004թ. հունիսի 24-ի դատավճռի: Որո՞նք են այս դատավճռի հիմնավորումները: Ի՞նչ իրավական հիմք ունի այն: Ի՞նչ հետեւանքներով է հղի ստրասբուրգյան դատավճիռը Գերմանիայի ու թերեւս նաեւ եվրոպական այլ երկրների համար: Եվ վերջապես. ինչպե՞ս է դիտարկում այս դատական գործը Գերմանիայի մամուլի խորհուրդը: Փորձեմ համառոտ ներկայացնել այս հարցերի պատասխանները՝ իմ տեսանկյունից:

I. Գործի փաստերը

Իրավական բանավեճերը շարունակվում են արդեն տասնմեկ ու կես տարի: Դրանք վերաբերում են համեմատաբար սովորական հանգամանքների: Գործի կենտրոնում արքայադստեր մասնավոր կյանքը պատկերող լուսանկարների հրապարակման օրինականությունն է: Լուսանկարները կատարվել էին հասարակական վայրերում նրա հայտնված ժամանակ, ասենք՝ թենիս խաղալիս, ձիավարելիս, ռեստորանում եւ ծովափնյա ակումբում:

Նկարները եւ ուղեկցող հոդվածները 1993-ի կեսերին ու 1997-ի սկզբին տպագրվել էին գերմանական «Բունթե» եւ «Ֆրայցայթ ռեվյու» հանդեսներում: ՄԻԵԴ-ը բացահայտորեն չի քննարկել հետեւյալը.

- ոչ հավաստի լրատվության դեպքերը,
- այն հրապարակումները, որոնք արդեն իսկ զտվել էին գերմանական դատարանների կողմից, այսինքն՝ Քերոլայնին իր երեխաների հետ պատկերող լուսանկարները,
- լուսանկարներն անելու հանգամանքերի օրինականությունը, այսինքն՝ այսպես կոչված «պապարացի» մեթոդների կիրառումը:

II. Գործի նախապատմությունը

Գերմանական դատարանները բազմաթիվ վճիռներ են կայացրել այս գործի առիթով: Վերջիվերջո, 1999թ. դեկտեմբերի 15-ին Դաշնային սահմանադրական դատարանն իր Կարլսռուհե նստավայրում պետք է որոշում ընդուներ Գերմանիայի քաղաքացիական բարձրագույն դատարանի (Դաշնային դատարան, 1995թ. դեկտեմբերի 19-ի դատավճիռ) կողմից հիմնարար իրավունքների մեկնաբանման շուրջ՝ իբրեւ Քերոլայն ֆոն Հանովերի ներկայացրած սահմանադրական բողոքի մի մաս: Դաշնային սահմանադրական դատարանը քննարկեց ճանաչված անձանց ընդհանուր իրավունքների եւ մամուլի ազատության հարցերը: Դատարանի կողմից հիմնարար իրավունքների այս մեկնաբանությամբ (Գերմանական հիմնարար օրենքի Հոդած 2-ի կետ 1՝ Հոդված 1-ի կետ 1-ի հետ զուգակցված) Քերոլայնին իր երեխաների հետ պատկերող լուսանկարները համարվեցին անընդունելի: 1999թ. դատարանն անդրադարձավ երեխաների պաշտպանության հատուկ անհրաժեշտությանը: Միեւնույն ժամանակ, գերմանացի դատավորը նաեւ որոշեց, որ արքայադուստրը ժամանակակից «հասարակական դեմք» է եւ իբրեւ այդպիսին պետք է հանդուրժի հասարակական վայրերում իրեն ցուցադրող լուսանկարների հրապարակումը: Քերոլայն ֆոն Հանովերը բողոքարկեց այս դատավճիռը Ստրասբուրգի ՄԻԵԴ-ում 2000թ.:

III. Իրավական հիմնավորումը

«Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» Հոդված 8-ի կետ 1-ով պաշտպանվում է մարդու անձնական եւ ընտանեկան կյանքը: Սակայն Կոնվենցիայի Հոդված 10-ը երաշխավորում է խոսքի, կարծիք արտահայտելու ազատությունը, ինչը, թեպետ բառացի չի նշված, անշուշտ ներառում է եւ մամուլի ազատությունը:

Ինչ վերաբերում է անձնական կյանքի պարագային, ապա Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիտարկմամբ դրա մեջ պետք է ընդգրկվեն նաեւ ճանաչված անձի անարգել զարգացումն ու այլ մարդկանց հետ փոխհարաբերությունները: Սա, իհարկե, ներառում է եւ այլոց հետ շփումները, երբ դրանք տեղի են ունենում հրապարակավ:

Ըստ դատարանի՝ պաշտպանված անձնական կյանքը ենթադրում է նաեւ անձի լուսանկարների, պատկերների գործածումը վերահսկելու իրավունքը: Հետեւաբար, ՄԻԵԴ-ը եկավ այն եզրակացության, թե խնդրո առարկա լուսանկարների հրապարակումը ենթադատ է մարդու անձնական կյանքի պաշտպանվածության իրավունքին:

Իրավունքի փորձագետների կարծիքով՝ թեպետ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի եւ Գերմանական սահմանադրության ձեւակերպումները նույնական չեն, սակայն իմաստը նույնն է: Կոնվենցիայի համաձայն՝ ազգային դատարաններին է վերապահված սեփական հայեցողությամբ գտնել արդարացի հավասարակշռություն այդ երկու իրավական հանգամանքների միջեւ՝ ուշադրությամբ կշռադատելով ճանաչված անձի պաշտպանվածության ու մամուլի ազատության շահերը: Դաշնային սահմանադրական դատարանի եւ ՄԻԵԴ-ի դատավճիռների միջեւ տարբերությունը ոչ այնքան դրանց իրավական հիմքով է պայմանավորված, որքան՝ դատարանների տված գնահատականներով:

1999թ. Դաշնային սահմանադրական դատարանը եւս սկզբունքորեն հաստատեց հայցվորի ընդհանուր անձնական իրավունքների նկատմամբ ոտնձգության փաստը, բայց՝ էապես տարբերվող հիմնավորմամբ: Դատարանն այլ եզրակացության հանգեց նաեւ գործը քննելիս: Ներկայումս ՄԻԵԴ-ը դիտողություն է արել Գերմանիայի սահմանադրական դատարանին՝ գործում առկա տարբեր շահերի միջեւ «հավասարակշռություն» չհաստատելու համար:

IV. Դատարանի կողմից իրավական հանգամանքների քննարկման մանրամասները

Դաշնային սահմանադրական դատարանը եկավ այն եզրակացության, որ նախորդ քաղաքացիական դատարանները գործել էին սահմանադրորեն՝ կիրառելով եւ մեկնաբանելով «Կունստուրէբերգե-

զեթցթ»-ի («Արվեստի ասպարեզում հեղինակային իրավունքի մասին» օրենքի) «22-ում եւ «23-ում ամփոփված իրավական դրույթները: Դատավճռում ընդգծված է, որ մամուլի ազատության պաշտպանությունը ոչ միայն սահմանափակված է քաղաքական ոլորտով, այլեւ ներառում է զուտ ժամանցը: Միմյանց հետ բախվող անձնական իրավունքները քննելիս՝ անհրաժեշտ է որոշել, թե «արդյո՞ք հանրային նշանակության հիմնահարցերը քննարկվում են լրջորեն եւ փաստացիորեն, թե՞ դրանք սոսկ մասնավոր հարցեր են, որոնք հետաքրքրասիրությանը հագուրդ տալու համար են»:

ՄԻԵԴ-ը գրեթե բոլոր կետերով մերժել է Դաշնային սահմանադրական դատարանի ներկայացրած հիմնավորումները: Ստրասբուրգը կոչ է արել միմյանցից խստորեն տարբերակել ժողովրդավարական հասարակությունում պաշտոնական բանավեճին նպաստող փաստերի մասին լրատվությունը եւ պաշտոնական դերակատարում չունեցող անձանց մասնավոր կյանքի մասին պատմող հաղորդագրությունը: Քերոլայն ֆոն Հանովերը պատկանում է վերջին խմբին: Ըստ ՄԻԵԴ-ի՝ խնդրո առարկա լուսանկարները ծառայել են միմիայն ընթերցողների հետաքրքրասիրության բավարարմանը: Նրանք որեւէ կերպ չեն նպաստել ընդհանուր հասարակական նշանակության բանավեճի ծավալմանը եւ հետեւաբար՝ մամուլի ազատության առումով ենթակա են սահմանափակ պաշտպանության:

Այսպիսով, ՄԻԵԴ-ի դատավճիռը բացահայտորեն հակադրվում է Կարլսռուհեի դատարանի սկզբունքային հրաժարմանը՝ միմյանցից տարբերակել տեղեկատվությունն ու ժամանցը: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը քննադատել է «ժամանակակից հասարակական դեմք» եզրը, ինչպես որ սահմանված է «Կունստուրէբերգեզեթցթ»-ի («Արվեստի ասպարեզում հեղինակային իրավունքի մասին» օրենքի) «23-ի կետ 1-ի թիվ 1-ում: Ավելին, ՄԻԵԴ-ը կասկածանքով է վերաբերվում այն ընտրողականությունը, որով տարբերակվել են «ժամանակակից հանրաճանաչ հասարակական դեմք» եւ «հարաբերականորեն հայտնի հասարակական դեմք» արտահայտությունները: Եվ վերջապես՝ տարածականորեն առանձնանալու չափանիշը խիստ անորոշ համարվեց, որպեսզի հնարավոր լինի դրա հիման վրա արժանահավատ վճիռ կայացնել գործի մեջ ներգրավված կողմերի համար:

V. ԵԼՔԸ

ՄԻԵԴ-ը եկավ այն եզրահանգման, որ հակամարտող շահերը քննելիս՝ գերմանական դատարանները խախտել էին անձնական

կյանքը հարգելու իրավունքը: Սա վերաբերում էր ՄԻԵԴ-ի կողմից քննության առնված բոլոր լուսանկարներին եւ ուղեկցող տեքստերին: Որոշում չէր կայացվել արդարացի փոխհատուցման կիրառման շուրջ՝ ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 41-ի:

Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը կարող է երեք ամսվա ընթացքում բողոքարկել Պալատի վճիռը: Այդ դեպքում հարկ կլինի դիմել, որպեսզի գործը փոխանցվի Ստրասբուրգի Մեծ պալատ (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 43-ի կետ 1): Գերմանիայում ծավալված բուռն քաղաքական բանավեճից հետո, որին մասնակցում էին մամուլը, հեռարձակող ընկերությունները, գլխավոր խմբագիրների մի մեծ խումբ, ինչպես նաեւ՝ Գերմանիայի մամուլի խորհուրդը, Գերմանիայի դաշնային կառավարությունը հրաժարվեց բողոք ներկայացնելուց: Այստեղ հարկ է նշել նաեւ, որ թե՛ Գերմանիայի կանցլեր Գերհարդ Շրյոդերը, թե՛ արտգործնախարար Յոշկա Ֆիշերը դեմ են եղել բողոք ներկայացնելուն:

VI. Դատավճռի իրավական հետեւանքներ ու ազդեցությունը

2004թ. հունիսի 24-ի դատավճիռը հաստատեց այս գործերում գերմանական դատարանների կողմից պայմանագրի խախտումը: Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի Հոդված 46-ի կետ 2-ի՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, որպես Եվրախորհրդի անդամ, պարտավոր է ենթարկվել Դատարանի կայացրած վերջնական դատավճռին: Ավելին, գերմանական դատարանները պետք է պահպանեն ՄԻԵԴ-ի դատավճռի իրավական ուժը, res judicata (մեկ անգամ վճռված գործի վերաքննում թույլ չտվող) սկզբունքը: Սակայն ստրասբուրգյան վճիռը Գերմանիայի որոշման իրավականությունը չեզոքացնող ազդեցություն չունի: Բացի այդ, մասնագետները դեռեւս չեն կարողանում որոշել, թե արդյո՞ք այս պարտավորությունը տարածվում է ՄԻԵԴ-ի կողմից վճռված գործի ու դրանում ներգրավված կողմերի վրա, եւ եթե այո, ապա ի՞նչ չափով:

Այդուհանդերձ, Գերմանիայի մամուլի խորհուրդը կարծում է, որ ստրասբուրգյան դատավճռի ուղղակի հետեւանքները չպետք է թերագնահատվեն: Այն իր ազդեցությունը կունենա համանման գործերի վրա: Իրավագիտության մեջ ենթադրվում է, որ ՄԻԵԴ-ի կայաց-

ռած դատավճռի հասցեատեր պետությունը պետք է կանխի Կոնվենցիայի համեմատելի խախտումները միանգամայն այլ մարդկանց շահերը շոշափող նմանատիպ գործերում: Սա նշանակում է, որ օրենսդիրներն ի սկզբանե պարտավորված են գործել այդ կերպ: Եվ ահա այս պահին է, որ երկընտրանքը դառնում է ակնհայտ:

VII. Գերմանիայի մամուլի խորհրդի գնահատականը

Գերմանիայի մամուլի խորհուրդը կարծում է, որ դատավճիռը նաեւ հիմնովին կվտանգի քաղաքական լրատվությունը: Մամուլի խորհրդի խնդիրը դեղին մամուլում այս լուսանկարների հրապարակումը պաշտպանելը չէ: Սակայն ՄԻԵԴ-ի վճիռը լուրջ անորոշություններ է հարուցում գործող լրագրության համար: ՄԻԵԴ-ի՝ 2004թ. հունիսի 24-ի դատավճիռը ներկա դրությամբ իրենով կփոխարինի Դաշնային սահմանադրական դատարանի ընդունած՝ միանգամայն տարաբնույթ որոշմանը: Տարիներ շարունակ այս վճռում գործածված էին «ժամանակակից հանրաճանաչ հասարակական դեմք» եւ «հարաբերականորեն հայտնի հասարակական դեմք» եզրերը: Մեր կարծիքով՝ այս եզրերը խիստ ընդհանրական բնույթի նորամուծություններով փոխարինելը կխոչընդոտի քաղաքական լրատվությանը: Ապագայում անհատ լրագրողը ստույգ չի իմանա, թե մասնավոր կյանքի պաշտպանվածության ի՞նչ աստիճան կարող է կիրառվել քաղաքական գործիչների կամ քաղաքականության մեջ ակտիվ անձանց նկատմամբ: Շարունակում է մտահոգություն պատճառել նաեւ այն, որ հետագայում կարիք կլինի բարելավել Գերմանիայում անձնական իրավունքների համակարգը՝ ներառյալ մամուլի ազատության շրջանակը:

Մամուլի խորհուրդը նշել է նաեւ, որ Գերմանիայում անձնական իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է ոչ միայն արդարադատական բարձրագույն մակարդակում: Հաճախ է գործի դրվում ինքնակարգավորումը, որը նույնպես վճռական դեր ունի այս ասպարեզում: Լրագրողների եւ հրատարակիչների կողմից նշադրված բարոյական չափանիշները, ինչպես նաեւ Մամուլի խորհրդի ընդունած որոշումները անձի իրավունքների հավասարակշռված պաշտպանություն են երաշխավորում: Կամավոր ինքնակարգավորման այս համակարգը պետք է անպայմանորեն հզորացվի ապագայում:

Մամուլի դեմ գանգատների բրիտանական հանձնաժողովի ՈՐՈՇՈՒՄԸ
«Քաղցած շունը սկսում է հոշոտել իր թոշակառու տիրոջը» հոդվածի վերաբերյալ

Տիկին Դորոթի Յոմանը, Լոնդոնի W1 հասցեի բնակիչ, բողոք է ներկայացրել Մամուլի դեմ գանգատների հանձնաժողովին առ այն, որ 2004թ. հունվարի 15-ին «Ռոնդա լիդեր» թերթում լույս տեսած՝ «Քաղցած շունը սկսում է հոշոտել իր թոշակառու տիրոջը» վերտառությամբ հոդվածը աննրբանկատ է եղել իր վշտի պահին՝ ի խախտումն Կանոնագրի Հոդված 5-ի (միջամտություն վշտի կամ ցնցման պահին):

«Քաղցած շունը սկսում է հոշոտել իր թոշակառու տիրոջը»

«Ռոնդա լիդեր», 15.01.2004թ.
Ռեբեկա Ուիլյամս

Փորթում բնակվող մի թոշակառուի, որը ուշաթափվել եւ մահացել էր, քիչ էր մնացել խժռի իր Սենդի անունով շունը

Թրեւոր Ջորջ Հենքոքսին (72 տարեկան, Փորթ քաղաքի Բրիտանիա թաղամասի Բրուք փողոցի բնակիչ) վերջին անգամ տեսել են հինգշաբթի՝ հունվարի 8-ի կեսօրին, եւ ասում են, որ դրանից քիչ անց նա իր տանը ուշագնաց է եղել:

Ենթադրվում է, որ, ընկնելիս նա փակել է իր խառնածին շան ճանապարհը՝ նրա գլուխը ծածկելով սեփական մարմնով:

Պրն. Հենքոքսին հայտնաբերել է շտապ օգնության ծառայությունը կիրակի օրը՝ հունվարի 10-ի առավոտյան, մոտավորապես 9 անց 37 րոպեին, այն բանից հետո, երբ անհանգստացած հարեւաններից մեկը զանգահարել է ոստիկանություն:

Ոստիկանության մի աշխատակցի վկայությամբ՝ պրն. Հենքոքսին գտել են մեջքի վրա ընկած՝ որովայնի ստորին հատվածում բաց վերքով եւ բազմաթիվ վնասվածքներով սեռական օրգանների վրա, որտեղից եւ շունը սկսել էր հոշոտել նրան:

Երկուշաբթի օրն անցկացված դիազննությամբ պարզվել է, որ պրն. Հենքոքսի մահը վրա է հասել բնական պատճառներից:

Նրան բնութագրում են՝ որպես հանդարտ նկարագրի տեր մարդու: Հարեւաններից մեկն այսպես է արտահայտվել. «Պրն. Հենքոքսն իրականում ինքնամփոփ մարդ էր, երբեմն կանգնում էր՝ մեկ-երկու բառ փոխանակելու, բայց չափազանց հանգիստ, լռակյաց անձնավորություն էր»:

Գանգատը բավարարվել է:

Հոդվածը տեղեկացնում է մի տղամարդու մահվան մասին, որը ուշաթափ էր եղել իր տանը: Նրա քույրը բողոքում է, որ հոդվածը դառնացնող էր եւ պարունակում էր անհարկի զգայական մանրամասներ:

Թերթը հասկանում է, որ բողոքարկողն ակնհայտորեն վշտացած է իր եղբոր մահով: Սակայն նրանք ասում են, թե իրենց հարցումները, որոնք հիմնված էին ոստիկանության մի ներկայացուցչի տրամադրած ու հետագայում եւս երկու այլ աղբյուրների կողմից հաստատված տեղեկատվության վրա, արվել էին կարեկցանքով ու նրբանկատությամբ: Նկատի առնելով դեպքի արտասովոր հանգամանքները, դժվար չէր լինի սենսացիոն հոդված հրապարակելը, մինչդեռ թերթի կարծիքով՝ իրենք կարեկցանքով ու պատշաճ զգայականությամբ են մոտեցել շարադրանքի կառուցվածքին եւ վերնագրին:

ՈՐՈՇՈՒՄ

Խոցելի իրավիճակում գտնվողների պաշտպանությունը առանցքային տեղ ունի Հանձնաժողովի կանոնագրում, եւ Հանձնաժողովը համարում է, որ մահացողների մերձավոր հարազատները մասամբ խոցելի վիճակում են մահվանն անմիջապես հաջորդող շրջանում: Այդ պատճառով Հոդված 5-ը վերաբերում է ինչպես տեղեկությունների հավաքման, այնպես եւ դրանց հրապարակման ձեւին՝ պահանջելով, որպեսզի նման դեպքերում թերթերը «նրբանկատությամբ» վերաբերվեն նյութին:

Արդյո՞ք նման նյութերը բավականաչափ զգայական են, թե՞ ոչ. այս մասին ցանկացած դատողություն անխուսափելիորեն սուբյեկտիվ կլինի՝ այս կամ այն չափով: Սակայն Հանձնաժողովը տվյալ դեպքում կարծում է, որ հոդվածի ողջ հնչերանգը եւ որոշ մանրամասների չարդարացված ներմուծումը հանգեցրել են Կանոնագրի խախտմանը: Գանգատը պաշտպանելիս՝ Հանձնաժողովը հաշվի է առնում, որ հոդվածը գրվել է մահվանից անմիջապես հետո, ըստ որում՝ մինչեւ թաղումը, եւ որ գործի մանրամասները պաշտոնապես չէին տրամադրվել հանրությանը, զորօրինակ՝ հետաքննության արդյունքների տեսքով:

<u>Համապատասխան նախադեպեր</u>
Թորնհիլլն ընդդեմ «Նյուս ընդ սթար»-ի, Զեկուցագիր 55
Հարվեյն ընդդեմ «Ռոչդեյլ օբզերվեր»-ի, Զեկուցագիր 45
Հեդն ընդդեմ «Լյուտոն օն սանդի»-ի, Զեկուցագիր 42

Եվրոպայի խորհուրդ
Նախարարների կոմիտե

Հռչակագիր

Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ

(Ընդունվել է նախարարների կոմիտեի կողմից, փոխնախարարների 848-րդ նիստում, 2003թ հուլիսի 10-ին)

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն,

հիշելով, որ անդամ երկները հավատարիմ են Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետեւ՝ Կոնվենցիա) 10 հոդվածում ամրագրված արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքին,

կրկին անգամ շեշտելով, որ արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության կարեւորագույն հիմնաքարերից եւ դրա առաջընթացի ու յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական նախապայմաններից մեկն է՝ ինչպես ասված է Արտահայտվելու եւ տեղեկատվության վերաբերյալ իր 1982 թվականի հայտարարագրում,

հաշվի առնելով անմեղության կանխավարկածի հիմնարար իրավունքին, Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատավարության իրավունքին եւ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված ընտանիքի ու մասնավոր կյանքի հարգանքի իրավունքին հավատարմությունը,

այնուհետեւ, հաշվի առնելով Կոնվենցիայի 11 հոդվածով նախատեսված միավորումներ կազմելու իրավունքի համաձայն լրագրողների եւ լրատվամիջոցների մասնագիտական միավորումներ կազմավորելու իրավունքը, որը լրատվամիջոցների ինքնակարգավորման հիմքն է,

հաշվի առնելով Կոնվենցիայի 6, 8 եւ 10 հոդվածներով պաշտպանվող իրավունքների հնարավոր բախումը եւ յուրաքանչյուր անհատական գործի փաստերից ելնելով այդ իրավունքների միջեւ հավասարակշռություն հաստատելու անհրաժեշտությունը, եւ գնահատելով Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարման հարցում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերահսկող դերը,

հաշվի առնելով, թե ինչ նշանակություն կարող է ունենալ լրատվամիջոցների ինքնակարգավորումն ու համատեղ կարգավորումը այդպիսի հավասարակշռություն հաստատելու հարցում,

տեղյակ լինելով ինքնակարգավորման միջոցով կամ կարգավորման ուղղությամբ պետության հետ համագործակցելով լրագրությունը Եվրոպայում զարգացնելու լրագրողների եւ լրատվամիջոցների բազմաթիվ նախաձեռնություններին,

գիտակցելով քրեական գործերի վերաբերյալ լրատվամիջոցներով տեղեկատվություն հաղորդելու համատեքստում խնդրո առարկա իրավունքների վերաբերյալ քաջատեղյակ երկխոսություն ծավալելու անհրաժեշտությունը,

ցանկանալով ուժեղացնել հիշատակվող համատեքստում պատասխանատվության զգացումով լրագրողական գործունեություն ծավալելը՝ հիմնականում խթանելով լրատվամիջոցների պատշաճ գործունեությունը վարքագծի կանոնների համաձայն կամ այլ նախաձեռնությունների միջոցով,

մտահոգված լինելով քրեական դատավարության վերաբերյալ տեղեկատվությունը կոմերցիոն նպատակներով օգտագործելու դեպքերից,

ցանկանալով, միեւնույն ժամանակ, ամրապնդել քրեական դատավարության առնչությամբ արտահայտվելու եւ տեղեկատվության ազատության իրավունքի զարգացումը, մասնավորապես ապահովելով այս կարգի դատավարությունների մատչելիությունը լրատվամիջոցների համար,

հիշելով իր (74)26 Բանաձեւը պատասխանի իրավունքի վերաբերյալ, «Քրեական իրավունքի եւ վարույթի շրջանակներում տուժողի կարգավիճակի վերաբերյալ» R(85)11 հանձնարարականը, «Վկաներին սպառնալու եւ նրանց պաշտպանության իրավունքի վերաբերյալ» R (97)13 հանձնարարականը, «Լրատվամիջոցների եւ հանդուրժողականության կուլտուրայի զարգացման վերաբերյալ» R(97)21 հանձնարարականը, ինչպես նաեւ «Տեղեկատվության աղբյուրները չբացահայտելու լրագրողների իրավունքի վերաբերյալ» R (2000)7 հանձնարարականը,

նկատի ունենալով լրագրողական ազատության եւ մարդու իրավունքների առընչությամբ 2 բանաձեւը, որն ընդունվել է ԶԼՄ-ների ռազմավարության վերաբերյալ 4-րդ Եվրոպական նախարարական համաժողովում (Պրագա, դեկտեմբեր 1994) , ինչպես նաեւ լրատվամիջոցների վաղվա օրվա ռազմավարության վերաբերյալ հայտարարագիրը, որն ընդունվել է լրատվամիջոցների ռազմավարությանը նվիրված Եվրոպական նախարարների 6-րդ համաժողովում (Կրակով, հունիս 2000),

տեղյակ լինելով 1998թ հոկտեմբերի 7-ին եւ 8-ին Ստրասբուրգում ԶԼՄ-ների կանոնակարգի մշակման հանձնաժողովի կողմից, ինչպես նաեւ Եվրոպական հանձնաժողովի եւ Գերմանիայի կողմից 1999թ-ի ապրիլի 19-ից 21-ին Սաարբրուկենում անցկացված լրատվամիջոցների ինքնակարգավորման վերաբերյալ գիտաժողովների մասին,

տեղյակ լինելով լրատվության հարցերով մասնագետների հետ հանրային խորհրդակցության մասին, որն անցկացվել է ԶԼՄ-ների կանոնակարգի մշակման հանձնաժողովի կողմից 2002թ-ի հունվարին,

Կոչ է անում անդամ երկրներին.

1. խրախուսել քրեական դատավարությունների վերաբերյալ պատշաճ տեղեկատվությունը՝ ուսուցանելով լրագրողներին օրենքի եւ դատական ընթացակարգի առումով, համագործակցելով լրատվամիջոցների եւ նրանց մասնագիտական կազմակերպությունների, կրթօջախների եւ դատարանների հետ, քանզի դա անհրաժեշտ է հասկանալու համար դատավարական գործընթացները, դատական գործով կողմերի եւ պետության շահերն ու իրավունքները, որոնք շոշափվում են այդ դատավարությունների ընթացքում,

2. աջակցել ինքնակարգավորմանը ուղղված ցանկացած նախաձեռնության, որով լրատվամիջոցները սահմանում են մասնագիտական վարքագծի չափանիշներ, որոնք առընչվում են քրեական դատավարությունների լուսաբանմանը, որպեսզի ապահովվի նախարարների կոմիտեի՝ «Լրատվամիջոցներով քրեական դատավարությունների մասին տեղեկատվություն հաղորդելու վերաբերյալ» (2003) 13 հանձնարարականում նշված սկզբունքների նկատմամբ հարգանքը,

3. համագործակցության եզրեր որոնել լրատվամիջոցների ոլորտում գործող ինքնակարգավորման մարմինների հետ,

4. լրատվամիջոցների ոլորտում գործող մասնագիտական կազմակերպություններին ընդգրկել քրեական դատավարության լուսաբանման վերաբերյալ համապատասխան օրինաստեղծ գործընթացների մեջ, օրինակ քննարկումների կամ խորհրդակցությունների միջոցով,

5. այս Հռչակագիրը մատչելի դարձնել պետական պաշտոնյաների ու դատարանների, ինչպես նաեւ լրագրողների եւ նրանց մասնագիտական կազմակերպությունների համար:

Հրավիրում է լրատվամիջոցներին եւ լրագրողներին.

1. կազմավորվել որպես կամավոր մասնագիտական կազմակերպություններ եւ ամբողջ Եվրոպայում զարգացնել նմանատիպ կազմակերպությունների միջեւ համագործակցությունը,

2. պատրաստել լրագրողների համար մասնագիտական վարքագծի ուղեցույցներ եւ չափանիշներ, հատկապես քրեական դատավարության լուսաբանման առընչությամբ՝ այնտեղ, որտեղ այդպիսիք դեռեւս չկան, եւ արմատավորել այդ ուղեցույցներին եւ չափանիշներին հետեւելու պրակտիկան,

3. իրենց լուսաբանումներում թե կասկածյալներին եւ թե մեղադրյալներին ներկայացնել որպես անմեղ, քանի դեռ վերջիններիս մեղքը չի ապացուցվել դատարանի կողմից՝ հաշվի առնելով որ նշված անձանց այդ իրավունքը վերապահված է Կոնվենցիայի 6-րդ հոդվածով,

4. հարգել տուժողների, հայցվորների, կասկածյալների, մեղադրյալների, դատապարտվածների, ինչպես նաեւ նրանց ընտանիքների արժանապատվությունը, անվտանգությունը եւ եթե տեղեկատվությունը հանրային հետաքրքրություն չի ներկայացնում, ապա նաեւ՝ Կոնվենցիայով վերապահված մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի նրանց իրավունքը,

5. չհիշատակել անձի նախկին դատվածությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ փաստը հանրային հետաքրքրության առարկա է կամ կրկին հայտնվել է հանրության ուշադրության կենտրոնում,

6. նրբանկատություն դրսեւորել քրեական դատավարության մեջ ընդգրկված անչափահասների եւ այլ խոցելի անձանց շահերի նկատմամբ,

7. խուսափել քրեական հետաքննությանն ու դատավարությանը վնասելուց,

8. քրեական դատավարության իրենց լուսաբանումներում խուսափել վնասակար եւ նվաստացուցիչ անվանարկումներից, երբ դրանք կարող են հարուցել այլազգիների նկատմամբ ատելություն, խտրականություն կամ բռնություն,

9. քրեական դատավարությունների լուսաբանումը վստահել այնպիսի լրագրողների, որոնք բավարար պատրաստվածություն ունեն այսպիսի հարցերում:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԼՄ-ՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ինքնակարգավորման համակարգ ձեւավորելու վերաբերյալ լրագրողական հանրության կարծիքների վերլուծություն

(Սոցիոլոգիական հետազոտության նյութերով)

Հետազոտությունն իրականացրել է աշխատանքային խումբը հետեւյալ կազմով՝

Բորիս Նավասարդյան - ծրագրի ղեկավար
Նելսոն Շահնազարյան - սոցիոլոգ
Մեսրոպ Հարությունյան - փորձագետ
Աշոտ Մելիքյան - փորձագետ

Հարցումն անցկացնելուն մասնակցել են

Արմեն Նիկողոսյանը
Սեդա Շիգանյանը
Անահիտ Խաչատրյանը
Անահիտ Կտիկյանը

Տվյալների համակարգչային մշակումը՝ **Մարինե Հայրիյանի**

Հեղինակները շնորհակալություն են հայտնում լրագրողական հանրության բոլոր այն ներկայացուցիչներին, ովքեր համաձայնեցին մասնակցել հետազոտությանը եւ օգտակար առաջարկություններ ու դիտողություններ արեցին ինքնակարգավորման համակարգի ստեղծման խնդիրների շուրջ:

Հետազոտությունն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ:

1.

Հետազոտության ընդհանուր համատեքստը, նպատակներն ու խնդիրները

ԶԼՄ-ների ինքնակարգավորման կառույցներն ու մեխանիզմներն արեւմտյան երկրներում սկսել են ձեւավորվել 19-րդ դարավերջին, սակայն իրենց ժամանակակից տեսքը ստացել են անցյալ դարի վերջին տասնամյակում: Տարբեր երկրներում այդ կառույցները տարբեր կազմակերպական ձեւ ունեն՝ մամուլի խորհուրդներ, լրագրողական էթիկայի հարցերով պարբերաբար հրավիրվող սեմինարներ ու խորհրդաժողովներ, ԶԼՄ-ների գործունեության վերլուծության կենտրոններ եւ այլն: Որոշ թերթերի խմբագրություններ իրենց հաստիքացուցակում ունեն օմբուդսման, ով էթիկայի հարցերով գլխավոր դատավոր է, այդ թվում՝ ապահովում է ընթերցողների պաշտպանությունը ոչ էթիկական հրապարակումներից: Այլ դեպքերում հրատարակությունները մշակում են իրենց էթիկական կանոնները (կանոնագրերը, վարքականոնները), որոնք մասնագիտական նորմերի հանաքածու են եւ որոնց պարտավոր են հետեւել տվյալ խմբագրության բոլոր աշխատակիցները:

Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների առջեւ ծառացած եւ հաճախ նրանց գոյությունն իսկ վտանգող ֆինանսական, տեխնիկական, կազմակերպական եւ այլ խնդիրների ֆոնին, լրագրողական էթիկայի հարցերը կարող են քիչ օրախնդիր թվալ: Այսուհանդերձ, հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ ինչ-որ գործի հաջողությունն ու բարգավաճումը սկսվել են հենց այն էթիկական սկզբունքների հաստատումից, որոնցով պարտավոր են առաջնորդվել դրա մասնակիցները: Ինքնակարգավորման համակարգի ձեւավորմանը հակադրվող տեսակետներից մեկն այն է, թե երկրում բավականին լրագրողական հասարակական կազմակերպություններ կան (մոտ 20), որոնցից մեկը կարող է կատարել նաեւ հիշյալ գործառույթը: Սակայն, նախ՝ երբ խոսք է գնում ԶԼՄ-ների ինքնակարգավորման մասին, որպես կանոն, ենթադրվում է ոչ թե մեկ կոնկրետ կազմակերպության, այլ ամբողջական համակարգի եւ հնարավոր է, ինչպես ասվեց վերեւում, բազմազան ձեւերի գոյություն: Երկրորդ, բոլորովին չի բացառվում ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգում որոշակի գործառույթների վերապահում գործող կազմակերպություններին: Ցանկացած որոշում պետք է լինի Հայաստանի լրագրողական հանրության բազմակողմանի քննարկման արդյունք:
Հայաստանում լրագրողական ինքնակարգավորման մի քանի տարրեր, որոշակի համակարգ ձեւավորելուն միտված միջոցառումներ նախաձեռնվել են 90-ական թվականների կեսերին: Երեւանի մամուլի ակումբը, Հայաստանի «Ինտերնյուսը», Հայաստանի ժուռնալիստների միությունը, Հետաքննող լրագրողների ընկերակցությունը, «Ֆեմիդա» հասարակական կազմակերպությունը եւ այլ լրագրողական միավորումներ մշակեցին եւ ընդունեցին

էթիկական կանոնագրեր (վարքականոններ): Որոշ ԶԼՄ-ներ լրագրողների հետ կնքվող պայմանագրերում ձեւակերպում են նաեւ մասնագիտական գործունեության նորմերն ու կանոնները:

Հայկական լրագրողական միջավայրում ինքնակարգավորման խնդրի քննարկման աշխուժացմանը, մասնագիտական էթիկայի՝ միջազգային չափանիշներին համապատասխանող փոխհամաձայնեցված կանոնների եւ նորմերի կիրառման հնարավորությունների ուսումնասիրությանը միտված քայլերն աշխուժացան վերջին հինգ տարիներին: Ընդսմին, ինքնակարգավորումը դիտարկվում էր եւ իբրեւ ԶԼՄ-ների օրենսդրական կարգավորման լրացում, եւ իբրեւ դրա այլընտրանք:

Հայկական լրագրության մեջ ինքնակարգավորման համակարգի կիրառման գաղափարի տարածմանը նպաստեցին նաեւ Երեւանի մամուլի ակումբի կողմից արտասահմանյան հեղինակների գրքերի, ընդհանուր մասնագիտական կանոնների ու նորմերի մշակման եւ ընդունման փորձը, ինքնակարգավորման այս կամ այն ձեւերը կիրառելու հնարավորությունները ներկայացնող այլ նյութերի թարգմանությունն ու հրատարակումը:

Լրագրողական հանրությանը ԶԼՄ- ների ինքնակարգավորման հիմնական գաղափարներին եւ կազմակերպական ձեւերին ծանոթացնելու համար Երեւանի մամուլի ակումբը միջազգային եւ տեղական կազմակերպությունների հետ անցկացրեց մի շարք սեմինարներ եւ հանդիպումներ:

Մասնավորապես, 2004 թվականին ԵՄԱ-ն «Արտիկլ-19» միջազգային կազմակերպության հետ նախաձեռնեց «կլոր սեղան», որին մասնակցեցին ԶԼՄ-ների եւ լրագրողական կազմակերպությունների 20 ղեկավարներ: Քննարկվեցին հայկական ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի ձեւավորման նպատակահարմարության եւ իրատեսական լինելու հարցերը: Եվ քանի որ «կլոր սեղանի» մասնակիցների կարծիքով խնդիրը «հասունացել էր», ձեւավորվեց գործողությունների կոնկրետ ծրագիր ուրվագծելու նախաձեռնող խումբ:

Երեւանի մամուլի ակումբը, Ֆրիդրիխ Էբերտի անվան հիմնադրամի աջակցությամբ, կազմակերպեց հայկական լրատվամիջոցների ղեկավարների խմբի այցելություն Գերմանիա՝ ծանոթանալու գերմանական ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգին, ուսումնասիրելու նրա առանձնահատկություններն ու արդյունավետությունը: Միջազգային փորձին ծանոթանալու առումով կարեւոր էր հայկական ԶԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությունը 2004 թվականին Ստամբուլում կայացած Թերթերի համաշխարհային կոնգրեսին եւ խմբագիրների հավաքին: Առաջին անգամ (Բաց հասարակության ինստիտուտի օժանդակությամբ) Հայաստանից ներկայացուցիչ մասնակցեց նաեւ մամուլի խորհուրդների եվրոպական միավորման տարեկան հանդիպմանը:

Մամուլի ներքին խնդիրների քննարկման եւս մեկ հնարավորություն էր «Մամուլի ակումբ» հեռուստահաղորդաշարի վերականգնումը: Այն եթեր է հեռարձակվում Հայկական երկրորդ հեռուստաալիքով:
Վերջին շրջանում նաեւ ԶԼՄ-ների ընկերակցության աշխատանքը վերականգնելու հարցի շուրջ խորհրդակցություններ անցկացվեցին հայկական մի շարք լրատվամիջոցների եւ մասնագիտական միավորումների ղեկավարների հետ: Նախնական համաձայնություններ են ձեռք բերվել այդ կազմակերպության գործունեությունը ակտիվացնելուն միտված համատեղ քայլերի շուրջ:

Նախատեսվում է ԵԱՀԿ - ի աջակցությամբ 2004 թվականի դեկտեմբերի 20-ին կազմակերպել «Հայաստանում ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի ձեւավորման հեռանկարները» թեմայով սեմինար, որի նախապատրաստության շրջանակներում էլ 2004 թվականի նոյեմբերի 15-30-ը իրականացվել է տվյալ սոցիոլոգիական հետազոտությունը:

Հետազոտության ***նպատակը*** ինքնակարգավորման համակարգի (կառույցների) ստեղծման նպատակահարմարության վերաբերյալ Հայաստանի ԶԼՄ-ների ղեկավարների եւ առաջատար լրագրողների, լրագրողական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքներն ու գնահատականները պարզելն ու դրա առավել ընդունելի ձեւն ու հիմնական գործառույթները որոշելն էր:

Հետազոտության ***մեթոդոլիգան*** ներառում էր հարցազրույցը՝ հատուկ մշակված հարցաթերթիկով (կցվում է): Նախնական քննարկմամբ իբրեւ հարցվողներ ընտրվել էին 109 հոգի՝ ինչպես համազգային, այնպես էլ տեղական ԶԼՄ-ների ղեկավարներ եւ առաջատար լրագրողներ, ինչպես նաեւ՝ Հայաստանում արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցիչներ ու լրագրողական հասարակական կազմակերպությունների ղեկավարներ (ցուցակը կցվում է): Այդ թվում՝

- համազգային տպագիր ԶԼՄ-ներ - 31
- համազգային լրատվական գործակալություններ - 9
- համազգային եւ կենտրոնական հեռարձակող ԶԼՄ-ներ - 26
- Երեւանում տեղակայած լրագրողական հասարակական կազմակերպություններ - 10
- արտասահմանյան ԶԼՄ-ների ներկայացուցիչներ - 13
- մարզերի ԶԼՄ-ներ եւ լրագրողական կազմակերպություններ - 20

Հարցվածներից 78-ը ԶԼՄ-ների ղեկավարներ (ղեկավարների տեղակալներ) էին, մնացած 31-ը՝ առաջատար լրագրողներ եւ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Այսպիսով, հետազոտության մեջ ընդգրկվել է Հայաստանի լրագրողական հանրության առավել հեղինակավոր եւ ազդեցիկ հատվածը, ինչը հարցման ներկայացուցչականության եւ ստացված արդյունքների գործնական բարձր արժեքի էական նախադրյալ է:

Հարցումն անանուն չէր: Հարցվողների անունները, նրանց պաշտոնները եւ նրանց ՁԼՄ-ները (կազմակերպությունները) նշվում էին հարցաթերթիկի կազմին: Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հարցման համար նախատեսված անձանց ճնշող մեծամասնությունը սիրով համաձայնեց մասնակցել դրան, եւ համագործակցությունից հրաժարվելու դեպքերը հազվադեպ էին: Հարցաթերթիկը պարունակում էր ինչպես լրագրողի գործունեության ընդհանուր էթիկական սկզբունքներին, այնպես էլ Հայաստանում ՁԼՄ-ների ինքնակարգավորման համակարգ ստեղծելու նպատակահարմարությանն ու հնարավորություններին վերաբերող հարցեր:

Ցանկացած սոցիոլոգիական հետազոտության ընդհանուր սկզբունքներից մեկը այս կամ այն հիմնավորմամբ դասակարգված տարբեր սոցիալական եւ հոգեբանական խմբերին պատկանող հարցվողների կարծիքները քննարկելն ու համադրելն է: Ընդսմին, պետք է ասել, որ նման բաժանումը սովորաբար որոշակի իմաստով պայմանական է:

Սույն հետազոտության մեջ բաժանումը կատարվել է հետեւյալ չափանիշներով.

ա) Լրագրողական հանրության մեջ ունեցած կարգավիճակով եւ գործառույթներով: Բոլոր հարցվածները բաժանված են երկու խմբի: Առաջինում ընդգրկված են զանգվածային լրատվության միջոցների ղեկավարները՝ գլխավոր խմբագիրները, նրանց տեղակալները, հիմնական ստորաբաժանումների ղեկավարները եւ այլն: Երկրորդ խմբում մենք ընդգրկել ենք նրանց, ովքեր ղեկավարման իրավասություններ չունեն եւ պարտավորությունների համակարգով անմիջականորեն կապված չեն ՁԼՄ-ների սեփականատերերի հետ. լրագրողներ եւ լրագրողական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (այս խումբը հետագայում նշվում է իբրեւ «մյուսներ»):

բ) ՁԼՄ - ի այս կամ այն տեսակին (ՀԿ-ին) պատկանելությամբ. տպագիր հրատարակություններ, լրատվական գործակալություններ, հեռարձակող ՁԼՄ-ներ, լրագրողական հասարակական կազմակերպություններ, արտասահմանյան ՁԼՄ-ների աշխատակիցներ եւ մարզերի ՁԼՄ-ներ (ՀԿ-ներ):

Ներկայացնելով ստացված արդյունքները՝ այնտեղ, որտեղ նպատակահարմար է, մենք առանձին դիտարկում ու համադրում ենք նշված խմբերին պատկանող հարցվողների կարծիքները:

2. Ստացված արդյունքները

Հավաքված տվյալները բաժանենք երկու խմբի եւ քննարկենք առանձին-առանձին.

- լրագրողական հանրության ներկայացուցիչների պատկերացումները մասնագիտական էթիկայի հարցերի վերաբերյալ (հարցաթերթիկի 1, 3, 4, 5 հարցեր),
- հարցվողների վերաբերմունքը ինքնակարգավորման համակարգի ձեւավորմանն ու Հայաստանի պայմաններում առավել ընդունելի կառույցներին, մեխանիզմներին եւ նման համակարգի գործառույթներին (հարցաթերթիկի 2, 6, 7, 8, 9, 10, 11 հարցեր),

2.1. Հայաստանի լրագրողական հանրության պատկերացումները մասնագիտական էթիկայի հարցերի եւ արժեքների համակարգի վերաբերյալ

Ամբողջ աշխարհում ԶԼՄ-ների գործունեության հիմնական գործնական, բայց եւ՝ միաժամանակ էթիկական խնդիրը «պատվիրատուի» հետ հարաբերություններն են: Դեպի ո՞ւմ հայացքներն ու ու ճաշակն են կողմնորոշվում լրագրողները նյութը պատրաստելիս: Ո՞ւմ համար են նրանք, ոչ այնքան դիվանագիտորեն արտահայտված, աշխատում:

Ամբողջատիրական համակարգի պայմաններում, երբ ԶԼՄ-ները լիովին վերահսկվում էին կոմունիստական կուսակցության կողմից, որը թելադրում էր եւ լրագրողների կադրային կազմը, եւ թերթերի տպաքանակները, եւ հրապարակումների գաղափարական բովանդակությունը, նման հարցեր, բնականաբար, չէին առաջանում: Սակայն հայտարարված ժողովրդավարության եւ շուկայական տնտեսության պայմաններում իրավիճակը նշանակալիորեն բարդացավ: Բնակչության բավականին համեստ վճարունակ պահանջարկը եւ գովազդի շուկայի սահմանափակությունը, հատկապես մարզերում, ստիպում են ԶԼՄ-ներին փնտրելու ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ՝ ի դեմս տեղական (երբեմն նաեւ արտասահմանյան) գործարար-հովանավորների կամ ֆինանսապես ապահով քաղաքական կուսակցությունների: Այսպիսով, հրատարակությունն անխուսափելիորեն, ավելի

կամ պակաս չափով, զրկվում է իր անկախության մի մասից՝ ստիպված կողնորոշվելով դեպի քաղաքական կուսակցության կամ ՁԼՄ-ի փաստացի սեփականատիրոջ (հովանավորի) «գիծը»: Մյուս կողմից, ակնհայտ է, որ զանգվածային լրատվության միջոցի բավականաչափ բացահայտ քաղաքական եւ անձնական հակումները առաջացնում են հասարակության բավականին զուսպ վերաբերմունքը նրա նկատմամբ, ինչը բացասաբար է անդրադառնում հրատարակության հեղինակության եւ ազդեցիկության վրա: Լրագրողական հանրության դիրքորոշումն այս խնդրի վերաբերյալ հատուկ հետաքրքրություն է ներկայացնում:

Աղյուսակ 1.

Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ է ղեկավարվում, ո՞ւմ հայացքներն ու ճաշակն է առաջին հերթին հաշվի առնում լրագրողների մեծամասնությունը հրապարակումը նախապատրաստելիս (միջին միավորներն ու զբաղեցրած տեղը: 1 - ամենից շատ են հաշվի առնում, 4 - ամենից քիչ են հաշվի առնում)

N	Կողմնորոշում	Միջին միավորը	Զբաղեցրած տեղը
1	Հայ լրագրողները հիմնականում անկախ են եւ ղեկավարվում են սեփական պատկերացումներով ու հայացքներով	2.73	3
2	Լրագրողների մեծամասնությունը վարում է ՁԼՄ խմբագրի (կուսակցության, լրատվամիջոցի տիրոջ) քաղաքականությունը	1.50	1
3	Լրագրողների մեծամասնությունը կողմնորոշված է դեպի հասարակության հետաքրքրությունները եւ ճաշակը	2.21	2
4	Լրագրողների մեծամասնությունը առաջնորդվում է միջազգային մասնագիտակա չափանիշներով	3.56	4

Ինչպես երեւում է աղյուսակից, հարցվածների մեծ մասի կարծիքով հայ լրագրողների համար նյութեր պատրաստելիս ամենից առաջնային է ՁԼՄ ղեկավարության, այսինքն խմբագիրների (սեփականատերերի, քաղաքական կուսակցության) նկատմամբ լոյալ լինելը: Կարեւորությամբ երկրորդ տեղում հասարակության շահերն ու ճաշակն են: Իսկ ըստ սանդղակի՝ միայն երրորդ ու չորրորդ տեղերն են զբաղեցնում այնպիսի արժեքներ, ինչպիսիք են սեփական կարծիքն ազատորեն ու անկախ արտահայտելը եւ միջազգային մասնագիտական չափանիշներով առաջնորդվելը:

Դիագրամ 1.

Հայ լրագրողների կողմնորոշումները ԶԼՄ-ների ղեկավարների եւ մյուս հարցվածների տեսակետից (դիագրամի վրա սյուների կարգը այստեղ եւ հետագայում համապատասխանում է աղյուսակի տարբերակներին):



Դիգրամի վրա ուշադրություն է գրավում այն, որ ղեկավարման գործառույթներ չունեցող լրագրողներն ու լրագրողական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները զգալիորեն ավելի սրությամբ են ընդունում իրենց գործընկերների կախվածությունը ԶԼՄ-ների ղեկավարներից: Թեպետ երկու խմբերն էլ գլխավորը համարում են հրատարակության «գծի» նկատմամբ լոյալությունը, «ոչ ղեկավարների» խումբը դրանում առավել միահամուռ է (համապատասխանաբար 1.62 եւ 1.19 միավոր): Մյուս կողմից, առաջին դեմքերն ավելի հակված են իրենց աշխատակիցներին համարելու մասնագիտական գործունեության մեջ անկախ եւ ինքնուրույն (2.64 եւ 2.97 միավոր):

Նույն խնդիրը դիտարկվել է մի փոքր այլ տեսանկյունից: Ո՞ւմ հետ են հայ լրագրողներն իրենց ավելի կապված համարում փոխադարձ պարտավորությունների առումով: Դեպի հասարակական ո՞ր կառույցը կամ մասնագիտական ընկերակցության որ խումբն են նրանք կողմնորոշվում գլխավորապես եւ ո՞ւմ շահերն են պարտավորված համարում պաշտպանել:

Աղյուսակ 2.

Փոխադարձ պարտավորությունների առումով ո՞ւմ հետ են ամենից ավելի կապված լրագրողները իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս (միջին միավորներն ու զբաղեցրած տեղը: 1 - ամենից շատ են կապված, 8 - ամենից քիչ են կապված)

N	Սոցիալական կառույց/խումբ	Միջին միավորը	Զբաղեցրած տեղը
1	ընտանիք	5.57	6
2	քաղաքական համախոհներ	4.25	3
3	պետություն	5.42	5
4	ԶԼՄ-ների սեփականատերեր	2.48	2
5	խմբագիր (տնօրեն)	2.08	1
6	միջավայր (ընկերական)	4.96	4
7	այլ լրագրողներ	5.58	7
8	հանրություն	5.65	8

Այն սոցիալական խմբերի եւ կառույցների ցուցակը, որոնց հետ հայ լրագրողները կապված են փոխադարձ պարտավորություններով, ըստ գերակայությունների բավականին վստահորեն կարելի է բաժանել երեք խմբի.

ա) ԶԼՄ-ների ղեկավարներ (խմբագիր/տնօրեն - 2.08 միավոր եւ սեփականատերեր - 2.48 միավոր) - միջինը 2.28 միավոր,

բ) քաղաքական համախոհներ (4.25 միավոր) եւ ընկերական միջավայր (4.96 միավոր) - միջինը 4.61 միավոր,

գ) պետություն (5.42 միավոր), ընտանիք (5.57 միավոր), գործընկերներ (5.58 միավոր) եւ վերջապես, հասարակություն (5.65 միավոր)- միջինը 5.56 միավոր:

Գերակայությունների դասակարգված ցուցակը բավականին խոսուն է եւ մեր կարծիքով, մեկնաբանությունների կարիք չունի: Միայն նշենք, որ հասարակության առջեւ պարտավորություններն ըստ կարեւորության վերջին տեղում են:
Այս խնդրի վերաբերյալ ԶԼՄ-ների ղեկավարների եւ մյուս հարցվողների հայացքները համարյա ամբողջովին համընկնում են:

Դիագրամ 2.

Սոցիալական կառույցների եւ խմբերի առաջնայնության գնահատականները ՀԼՄ -ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կողմից (տվյալները ներկայացված են ըստ պատասխանների վերը նշված խմբերի)



Անդրադառնանք ցանկացած հասարակական, հրապարակային կառույցի (առավել եւս այնպիսին, ինչպիսին լրագրողական ընկերակցությունն է) համար չափազանց կարեւոր խնդրի՝ էթիկական նորմերի կանոնագրին, որով, ըստ հարցվածների, պետք է առաջնորդվեն հայկական ՀԼՄ-ների ղեկավարներն ու աշխատակիցները: Հարցվողներին առաջարկվել էր 5 միավորանոց սանդղակով գնահատել ներկայացված ութ էթիկական նորմերից յուրաքանչյուրի կարեւորությունը լրագրողի մասնագիտական գործունեության համար:

Աղյուսակ 3.

Գնահատեք ստորեւ բերված էթիկական նորմերը լրագրողի մասնագիտական գործունեության մեջ դրանց կարեւորության առումով (1 - կարեւոր չէ, 5 - շատ կարեւոր):

N	էթիկական նորմեր	Միջին միավորը	Զբաղեցրած տեղը
1	լրատվության հավաստիություն	4.86	1
2	անաչառություն, անկողմնակալություն	4.75	2
3	շահերի բախումից խուսափում	3.31	8
4	փաստերի եւ կարծիքների տարանջատում	4.21	5
5	տեղեկատվության եւ գովազդի տարանջատում	4.09	6
6	համերաշխություն այլ լրագրողների հետ	3.72	7
7	կաշառքի եւ շորթումների մերժում	4.59	4
8	գրագողության բացառում	4.61	3
9	միջինը	4.27	-

Նախ նշենք, որ մասնագիտական էթիկայի բոլոր թվարկված նորմերն էլ Հայաստանի լրագրողական հանրության կողմից բավականին բարձր են գնահատվում՝ միջին հաշվով 4.27 միավոր, 5-միավորանոց սանդղակով: Ընդ որում, ամենից բարձր գնահատվում են այնպիսի էթիկական նորմեր, ինչպիսիք են լրատվության անաչառությունը, հավաստիությունն ու անկողմնակալությունը՝ միջին 4.80 միավոր:

Ըստ գերակայության՝ հաջորդ խմբում են «գրագողության բացառումը» եւ «կաշառքի ու շորթումների մերժումը», միջինը՝ 4.60 միավոր:

Երրորդ խմբում, ըստ գերակայության, ընդգրկված են «փաստերի եւ կարծիքների տարանջատում» եւ «տեղեկատվության ու գովազդի տարանջատում» նորմերը, միջինը 4.15 միավոր:

Վերջապես, ամենից անկարեւոր են համարվում «համերաշխություն այլ լրագրողների հետ» եւ «շահերի բախումից խուսափում» նորմերը, միջինը՝ 3.52 միավոր:

Դիագրամ 3.

Մասնագիտական էթիկական նորմերի գնահատումը ԶԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կողմից (տվյալները ներկայացված են ըստ պատասխանների վերը նշված խմբերի):



Լրագրողներն ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ԶԼՄ-ների ղեկավարների համեմատ զգալիորեն ավելի բարձր են գնահատում երրորդ խմբի նորմերը՝ «փաստերի եւ կարծիքների տարանջատում» ու «տեղեկատվության եւ գովազդի տարանջատում» եւ մի քիչ ցածր՝ «համերաշխություն այլ լրագրողների հետ» (այս ցուցանիշը գնահատվել է համապատասխանաբար 3.83 եւ 3.42) ու «շահերի բախումից խուսափում» նորմերը:

Այստեղ ուշադրության է արժանի էթիկական գերակայությունների համակարգում արձանագրված որոշակի հակասությունը: Դժվար է տեղեկատվության անաչառությունը, հավաստիությունը եւ անկողմնակալությունը պատկերացնել առանց փաստերի եւ կարծիքների տարանջատման ու հատկապես, առանց տեղեկատվության եւ գովազդի տարանջատման կամ շահերի բախումից խուսափելու: Ընդսմին, այդ սկզբունքներն իրենց կարեւորությամբ բավականին նկատելի ցածր միավորներ ունեն:Նշենք նաեւ, որ երկրորդական է համարվել այլ լրագրողների հետ համերաշխությունը: Հաշվի առնելով, որ փոխադարձ պարտավորությունների առումով հարցվողներն իրենց գործընկերներին նախավերջին տեղում էին նշել (տես՝ աղյուսակ 2), կարելի է ասել, որ հայ լրագրողների մասնագիտական ընկերակցության հոգեբանական մթնոլորտի խնդիրը, համենայն դեպս, լրացուցիչ ուշադրության ու քննարկման կարիք ունի:

Հաջորդ հարցով առաջարկվում էր գնահատել, թե որքանով են հայ լրագրողներն իրենց գործունեության ընթացքում պահպանում այդ նորմերը:

Աղյուսակ 4.

Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ են հայ լրագրության մեջ պահպանվում մասնագիտական էթիկայի վերոհիշյալ նորմերը

N	Պատասխանների տարբերակները	Ընտրել են տվյալ տարբերակը, %
1	0 - 25% -ով	47.7
2	26 - 50% -ով	35.8
3	51 - 75% -ով	15.6
4	76 - 100% -ով	0.9
5	ընդհանուրը	100

Հարցվածների կարծիքով, ընդհանուր առմամբ, մասնագիտական էթիկայի նորմերը ժամանակակից հայկական լրագրության մեջ պահպանվում են 30.4 տոկոսով, այսինքն՝ 1/3-ից պակաս չափով: ԶԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական հանրության այլ ներկայացուցիչների կարծիքներն այս հարցում որոշակիորեն տարբեր են. վերջինները իրավիճակն ավելի հոռետեսական են գնահատել:

Դիագրամ 4.

ԶԼՄ- ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կարծիքները հայ լրագրության մեջ մասնագիտական էթիկայի նորմերի պահպանման աստիճանի մասին:
(Միջին հաշվով, %)



2.2. Հայաստանի լրագրողական հանրության վերաբերմունքը ինքնակարգավորման համակարգի ձեւավորմանը

Այս հատվածում բերված են լրագրողական հանրության կարծիքներն այն մասին, թե որքանով է նպատակահարմար եւ հնարավոր Հայաստանում ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի ձեւավորումը: Սկսենք իրավիճակի եւ երկրում իրապես անկախ ու անաչառ լրագրություն ունենալու հնարավորության վերաբերյալ ընդհանուր տեսակետի վերլուծությունից:

Աղյուսակ 5.

Երկրում գոյություն ունեցող քաղաքական, սոցիալական եւ բարոյական ներկա իրավիճակում հնարավո՞ր է, արդյոք, ունենալ իրապես անկախ եւ անաչառ լրագրություն

N	Պատասխանների տարբերակները	Ընտրել են տվյալ տարբերակը, %
1	լիովին հնարավոր է	5.5
2	հնարավոր է	54.1
3	դժվարանում եմ պատասխանել	7.3
4	հնարավոր չէ	23.9
5	բացարձակապես հնարավոր չէ	9.2
6	**ընդհանուրը**	**100**

Լրագրողական հանրության հեղինակավոր ներկայացուցիչների մեծամասնությունը՝ 59.6 տոկոսը, կարծում է, որ երկրում առկա պայմաններում կարելի է հասնել նրան, որ լրագրությունը լինի միանգամայն անաչառ ու անկախ, եւ միայն մեկ երրորդն է հակառակը կարծում:

Սակայն ԶԼՄ-ների առաջին դեմքերի ու լրագրության մյուս ներկայացուցիչների կարծիքներն այս հարցում տրամագծորեն հակառակ են: Լրագրողների միայն 25.8 տոկոսն է դրական պատասխանել («լիովին հնարավոր է» եւ «հնարավոր է»), այն դեպքում, երբ առաջին դեմքերի շրջանում լավատեսները 77.1 տոկոս են կազմում: Հոռետեսները, ներառյալ նրանք, ովքեր դժվարացել են պատասխանել, համապատասխանաբար 74.2 եւ 26.9 տոկոս են կազմում:

Դիագրամ 5.

ԶԼՄ- ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կարծիքները երկրում անկախ եւ անաչառ լրագրություն ունենալու հնարավորությունների մասին (դրական եւ բացասական, ներառյալ՝ «դժվարանում եմ պատասխանել», կարծիքները խմբավորված են)



Հարցաթերթիկի որեւէ այլ հարցի լրագրողական հանրության տարբեր խմբերի կողմից չեն տրվել նման հակասական պատասխաններ: Առավել տեսանելի դարձնելու համար տանք կարծիքների մանրամասն բաշխման պատկերը:

Աղյուսակ 6.

Երկրում գոյություն ունեցող քաղաքական, սոցիալական եւ բարոյական ներկա իրավիճակում հնարավո՞ր է, արդյոք, ունենալ իրապես անկախ եւ անաչառ լրագրություն

N	Պատասխանների տարբերակները	Ընտրել են տվյալ տարբերակը, %	
		Ղեկավարներ	Մյուսներ
1	լիովին հնարավոր է	7.7	-
2	հնարավոր է	68.4	26.8
3	դժվարանում եմ պատասխանել	3.8	16.1
4	հնարավոր չէ	17.9	38.7
5	բացարձակապես հնարավոր չէ	5.1	19.4
6	ընդհանուրը	100	100

Ընդունա՞կ է, արդյոք, առկա պայմաններում, լրագրողական հանրությունը հնարավորություններ գտնել՝ ապահովելու համար գործունեության եւ մասնագիտական էթիկայի պահպանման առավել բարձր մակարդակ: Այն հանգամանքը, որ ԶԼՄ-ների ղեկավարները, ովքեր սույն հարցման արդյունքներով ներկայացվել են իբրեւ հրապարակումների բովանդակության եւ ուղղվածության վրա ազդող խմբի մաս (տես՝ աղյուսակ 1) լավատեսորեն են տրամադրված, դրական պատասխան է հուշում: Սակայն հարկ է նաեւ, ճշտելու համար, ընդգծել, որ իրենց ոլորտում իրավիճակի որոշակի պատասխանատվություն կրողները, որպես կանոն, հակված են այն ավելի բարենպաստ ներկայացնելու:

Աղյուսակ 7.

Ձեր կարծիքով, հնարավո՞ր է, որ մեր լրագրողական հանրությունն ինքը ապահովի մասնագիտական բարոյականության ավելի բարձր մակարդակ

N	Պատասխանների տարբերակները	Ընտրել են տվյալ տարբերակը, %
1	հնարավոր է	31.2
2	հնարավոր է որոշակի պայմաններում	59.6
3	դժվարանում եմ պատասխանել	1.8
4	հնարավոր չէ	6.4
5	բացարձակապես հնարավոր չէ	0.9
6	**ընդհանուրը**	**100**

Եվ դարձյալ կարելի է նշել, որ երկրի լրագրողական հանրության առավել ազդեցիկ ներկայացուցիչների բացարձակ մեծամասնությունը լավատեսորեն է տրամադրված: ԶԼՄ-ների ղեկավարներն ու լրագրողները ոչ միայն վստահ են, որ մասնագիտական գործունեության ավելի բարձր չափանիշների հասնելը սկզբունքորեն հնարավոր է (տես՝ աղյուսակ 5), այլեւ՝ որ դրան կարող է հասնել հենց ինքը՝ հանրությունը, սեփական ուժերով:

Սակայն ԶԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների հայացքներն այստեղ էլ նշանակալիորեն տարբերվում են (թեպետ ոչ այնքան արմատապես, որքան նախորդ դեպքում): Եվ դարձյալ՝ լրագրողներն ավելի հոռետես են. նրանց 16.2 տոկոսը (ներառյալ 6.5 տոկոսը, որ դժվարացել է պատասխանել) կարծում է, թե սեփական ուժերով մասնագիտական գործունեության անկախության եւ անաչառության առավել բարձր չափանիշների հասնելը հնարավոր չէ: Այն դեպքում, երբ ԶԼՄ-ների ղեկավարներից միայն 6.4 տոկոսն է հոռետես:

Դիագրամ 6.

ԶԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կարծիքները մասնագիտական էթիկայի առավել բարձր մակարդակ ապահովելու վերաբերյալ (դրական եւ բացասական, ներառյալ՝ «դժվարանում եմ պատասխանել», կարծիքները խմբավորված են):



Հարցումն ընդհանուր առմամբ հայկական ԶԼՄ-ների էթիկական մակարդակի ոչ բարձր գնահատականի (տես՝ աղյուսակ 4) եւ իրավիճակն արմատապես շտկելու (տես՝ աղյուսակ 6), ինչպես նաեւ հարցվողների կողմից էթիկական սկզբունքներն ընկալելու (տես՝ աղյուսակ 3) միջեւ որոշակի հակասություն երեւան հանեց: Այս խնդիրը խոր ուսումնասիրության կարիք ունի, մանավանդ, եթե ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգ ստեղծելու քայլեր պիտի ձեռնարկվեն:

Հարցերի հաջորդ խմբում առաջարկվում էր գնահատել ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի՝ իբրեւ վերը քննարկված խնդիրների լուծման արդյունավետ տեխնոլոգիայի հնարավորություններն ու տարբերակները: Այդ հարցերը դիտարկենք առավել մանրամասն՝ զանազան լրատվական կառույցների եւ կազմակերպությունների տեսակետից:

Աղյուսակ 8.

Ինչպե՞ս եք վերաբերվում ԶԼՄ ինքնակարգավորման համակարգի ստեղծման գաղափարին (պատասխանները ներկայացված են տոկոսներով)

N	Պատասխանի տարբերակները	Տպագիր ԶԼՄ-ներ	Լրատվական գործակալություններ	հեռարձակող ԶԼՄ-ներ	Հասարակական կազմակերպություններ	Արտասահմանյան ԶԼՄ-ներ	Մարզերի ԶԼՄ-ներ եւ կազմակերպություններ	Ընդամենը
1	համամիտ եմ	32.3	66.7	50.0	70.0	53.8	80.0	54.1
2	ավելի շուտ համամիտ եմ	38.7	22.2	26.9	30.0	23.1	20.0	28.4
3	դժվարանում եմ պատասխանել	19.3	11.1	15.4	-	7.7	-	11.0
4	ավելի շուտ համամիտ չեմ	6.5	-	3.9	-	-	-	2.8
5	համամիտ չեմ	3.2	-	3.8	-	15.4	-	3.7
6	Ընդհանուրը	100	100	100	100	100	100	100

Ինքնակարգավորման համակարգ ստեղծելու գաղափարը պաշտպանում է լրագրողական հանրության հարցման ենթարկված ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը՝ 82.5 տոկոսը, ընդ որում՝ կեսից ավելին անվերապահորեն:

Նշենք, որ գաղափարի առավելագույն թվով կողմնակիցներ արձանագրվել են մարզային ԶԼՄ-ների եւ լրագրողական կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում (100-ական տոկոս), նվազագույն՝ տպագիր լրատվամիջոցների ներկայացուցիչների շրջանում՝ 71% (թեպետ, իհարկե, սրանք էլ իրենց խմբում ճնշող մեծամասնություն են կազմում): Ինքնակարգավորման մարմինների ստեղծման գաղափարին որոշ հոռետեսությամբ են վերաբերվել արտասահմանյան ԶԼՄ-ների ներկայացուցիչները՝ 15.4 տոկոսը կտրականապես համամիտ չէ դրան, սակայն այս խմբում էլ կողմնակիցները բացարձակ մեծամասնություն են՝ 76.9%:

Դիագրամ 7.

ԶԼՄ-ների ղեկավարների եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կարծիքները ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգ ստեղծելու նպատակահարմարության վերաբերյալ (դրական եւ բացասական, ներառյալ՝ «դժվարանում եմ պատասխանել», կարծիքները խմբավորված են):



ԶԼՄ-ների ղեկավարներն ավելի շատ են կողմնակից ինքնակարգավորման համակարգի ստեղծմանը, քան հարցվածների մյուս խումբը (լրագրողներ + ՀԿ-ների ներկայացուցիչներ): Սա հաստատում է նաեւ այն, որ եթե առաջին դեմքերի շրջանում անվերապահորեն աջակցողները կազմում են 56.4%, ապա երկրորդ խմբում՝ կեսից պակաս՝ 48.4%, իսկ կտրականապես դեմ են համապատասխանաբար 2.6%-ը եւ 6.5%-ը:

Ընդհանրապես, հայ լրագրողների գործունեության մեջ բարձր չափանիշների հասնելու հնարավորության առումով լավատեսության եւ վստահության առավել մեծ մակարդակը, որ նշել էին ԶԼՄ-ների ղեկավարները, հիմք են տալիս հուսալու, որ երկրում գործընթացների զարգացումը, մասնավորապես՝ ինքնակարգավորման համակարգ ստեղծելու ճանապարհով, կարող է հաջողություն ունենալ:

Մյուս կողմից՝ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ ղեկավար գործառույթներ չիրականացնող լրագրողների հարաբերական հոռետեսությունը (տես՝ նաեւ դիագրամ 6) լուրջ վերլուծության եւ իմաստավորման կարիք ունի:

Ինչպես նշել ենք ներածականում, տարբեր երկրներում ինքնակարգավորման տարբեր համակարգեր եւ մարմիններ են գործում: Լրագրողական հանրության կարծիքով ո՞ր տարբերակն է առավել նպատակահարմար ձեւավորել Հայաստանում:

Աղյուսակ 9.

Ինչպիսի՞ մարմին կամ համակարգ է նպատակահարմար եւ հնարավոր ձեւավորել Հայաստանում (կարելի էր ընտրել մի քանի պատասխան. Աղյուսակում տոկոսները հաշված են պատասխանների հանրագումարից):

%-ներով

N	Պատասխանի տարբերակները	Տպագիր ԶԼՄ-ներ	Լրատվական գործակալություններ	հեռարձակող ԶԼՄ-ներ	Հասարակական կազմակերպություններ	Արտասահմանյան ԶԼՄ-ներ	Մարզերի ԶԼՄ-ներ եւ կազմակերպություններ	Ընդամենը
1	մամուլի խորհուրդ	28.9	26.7	35.5	25.0	31.6	37.2	31.7
2	մամուլի օմբուդսման	7.7	6.7	3.2	20.0	-	14.0	8.9
3	ԶԼՄ-ների գործունեության վերլուծության կենտրոն	19.2	26.7	29.0	15.0	31.6	18.6	22.2
4	պարբերաբար հրավիրվող էթիկայի հարցերով ժողով	19.2	26.7	19.4	15.0	10.5	16.3	17.8
5	առանձին ԶԼՄ-ի էթիկայի կանոնագիր	21.2	6.6	12.9	25.0	15.8	13.9	16.7
6	ոչ մեկը	3.8	6.6	-	-	10.5	-	2.7
6	**ընդհանուրը**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

ԶԼՄ-ների ինքնակարգավորման համակարգի կազմակերպական ձեւերը նախապատվությունների առումով ունեն հետեւյալ տեսքը.

1. Մամուլի խորհուրդ
2. ԶԼՄ-ների գործունեության հետազոտման կենտրոն, որը պարբերաբար կիրապարակի վերլուծականներ
3. Լրագրողական հանրության կողմից պարբերաբար հրավիրվող էթիկայի հարցերով ժողով
4. Առանձին ԶԼՄ-ի էթիկայի կանոնագիր
5. Մամուլի օմբուդսման

Հարցվածների կողմից առաջ քաշված այլ գաղափարներից նշենք երկուսը՝ բոլոր լրագրողների կողմից մասնագիտական գործունեության էթիկական սկզբունքների ու խարտիայի ընդունում, ինչպես նաեւ՝ ԶԼՄ-ների ղեկավարների կողմից սկզբունքների Պայմանագրի ստորագրում:

Ընդգծենք, որ հարցվածների մեծ մասի կարծիքով ինքնակարգավորման առավել նախապատվելի կազմակերպական ձեւը Մամուլի խորհուրդն է:

Սա հաստատվում է նաեւ այն փաստով, որ եթե ընտրանքի տոկոսը տարածենք ոչ թե պատասխանների հանրագումարի, այլ հարցվածների թվի վրա, ապա կստացվի, որ բոլոր հարցվածների 52.3 տոկոսը հիշատակել է Մամուլի խորհուրդը:

ՁԼՄ-ների առաջին դեմքերի եւ լրագրողական հանրության մյուս ներկայացուցիչների կարծիքները հիմնականում համընկել են, սակայն վերջինները մի քիչ ավելի են կարեւորում մամուլի օմբուդսմանի պաշտոնը:

Որպեսզի նման համակարգը (մարմինը) կենսունակ լինի, անհրաժեշտ է, որ այն իրականացնի լրագրողական հանրության տեսակետից օգտակար գործառույթներ: Այս իմաստով շատ կարեւոր է իմանալ, թե առաջին հերթին ինչ խնդիրներով պետք է զբաղվի այդ մարմինը:

Աղյուսակ 10.

Ի՞նչ գործառույթներ է նպատակահարմար վերապահել ինքնակարգավորման մարմնին (համակարգին), եթե ստեղծվի այդպիսին (ստորակարգումը 1 - ից 4, ընդ որում՝ 1 - ամենակարեւորը գործառույթը, 4 - ամենաքիչ կարեւորը գործառույթը)

N	Պատասխանի տարբերակները	Տպագիր ՁԼՄ-ներ	Լրատվական գործակալություններ	հեռարձակող ՁԼՄ-ներ	Հասարակական կազմակերպություններ	Արտասահմանյան ՁԼՄ-ներ	Մարզերի ՁԼՄ-ներ եւ կազմակերպություններ	Ընդամենը
1	հանրությանը պաշտպանել անբարեխիղճ լրատվությունից	1.93	2.22	1.84	2.00	1.92	1.95	1.94
2	պաշտպանել մամուլի ազատությունը	1.97	1.89	2.40	1.90	1.83	1.58	1.97
3	լուծել պրոֆեսիոնալ էթիկայի, լրագրողական համերաշխության հարցերը	2.40	2.00	2.44	2.70	2.58	2.84	2.50
4	լուծել տարբեր ՁԼՄ-երի միջեւ ծագած կոնֆլիկտները	3.70	3.89	3.32	3.40	3.67	3.63	3.58

Հարցվածներն ինքնակարգավորման մարմնի հիմնական գործառույթներ են համարում՝

- Հասարակության պաշտպանությունն անբարեխիղճ լրատվությունից
- ԶԼՄ-ների ազատության պաշտպանությունը:

Մասնագիտական էթիկայի եւ լրագրողական համերաշխության հարցերի լուծումը համարվել է ինքնակարգավորման մարմնի քիչ կարեւոր գործառույթ: Վերջին տեղում տարբեր ԶԼՄ-ների միջեւ ծագած կոնֆլիկտներում հաշտարար դատավորի դերն է:
Եղել են նաեւ լրացուցիչ առաջարկներ՝ ինքնակարգավորման համակարգի գործառույթները սահմանափակել միայն ընդհանուր էթիկական նորմերի մշակմամբ, ինչպես նաեւ՝ նրան վերապահել առանձին ԶԼՄ-ների ներսում ծագող կոնֆլիկտների լուծման իրավասություններ:

Վերը հիշատակված՝ երկու առավել կարեւորված գործառույթներին հատկապես մեծ նշանակություն են տալիս մարզային լրատվամիջոցների ներկայացուցիչները, ընդ որում, նրանց համար շատ օրախնդիր է ԶԼՄ-ների ազատության պաշտպանության գործառույթը (1.60 միավոր): Իսկ հեռարձակող ԶԼՄ-ների ներկայացուցիչները նույն խնդրին բավականին հանգիստ են վերաբերվում (միջինը 2.38 միավոր):
Վերջապես նշենք, որ ԶԼՄ-ների առաջին դեմքերի եւ մյուս հարցվածների կարծիքների միջեւ այս հարցում էական տարբերություններ չկան: Ըստ երեւույթին ինքնակարգավորման մարմնից նման ակնկալիքները կարիք ունեն հետագա իմաստավորման եւ քննարկման:

Ակնհայտ է, որ ցանկացած նախագծի իրականացման հաջողությունը կախված է այն նախաձեռնողների եւ իրականացնողների հեղինակությունից, կամքից եւ իրավասությունից: Ո՞վ կարող է, հարցվածների կարծիքով, գլխավորել Հայաստանում ինքնակարգավորման մարմնի ձեւավորման գործընթացը:

Աղյուսակ 11.

Ձեր կարծիքով, ովքե՞ր պետք է նախաձեռնեն նման համակարգի ստեղծումը եւ լինեն հիմնադիրները (հնարավոր էր ընտրել մի քանի պատասխան: Աղյուսակում տոկոսները հաշվված են պատասխանների հանրագումարից):

%-ներով

N	Պատասխանի տարբերակները	Տպագիր ԶԼՄ-ներ	Լրատվական գործակալություններ	հեռարձակող ԶԼՄ-ներ	Հասարակական կազմակերպություններ	Արտասահմանյան ԶԼՄ-ներ	Մարզերի ԶԼՄ-ներ եւ կազմակերպություններ	Ընդամենը
1	ԶԼՄ-ների սեփականատերերը	8.2	-	10.7	7.4	7.7	4.4	7.2
2	ԶԼՄ-ների առաջին դեմքերը	29.5	35.0	28.6	25.9	26.9	31.1	29.4
3	Լրագրողական կազմակերպությունները	29.5	35.0	30.4	29.7	34.6	37.8	32.3
4	Լրագրողները	23.0	25.0	25.0	22.2	23.1	17.8	22.6
5	Հասարակության այլ ներկայացուցիչներ	9.8	5.0	5.3	14.8	7.7	8.9	8.5
6	**Ընդհանուրը**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**	**100**

Ինքնակարգավորման համակարգի նախընտրելի հիմնադիրների ցուցակում առաջին երկու տեղերը վստահորեն զբաղեցնում են՝

- լրագրողական կազմակերպությունները
- ԶԼՄ-ների առաջին դեմքերը:

Սա հաստատվում է նաեւ նրանով, որ հարցվածների թվից հաշվարկելու դեպքում լրագրողական կազմակերպությունները ստանում են 69.7%, ԶԼՄ-ների առաջին դեմքերը՝ 63.3%: Երրորդ տեղում լրագրողներն են: Վերջին տեղը զբաղեցրել են սեփականատերերը:

Իբրեւ համակարգի առավել ընդունելի հիմնադիրներ ԶԼՄ-ների առաջին դեմքերին եւ լրագրողական կազմակերպություններին նշել են լրագրողական հանրության բոլոր հարցված խմբերը: Էական տարաձայնություններ չկան նաեւ հարցվածների երկու ընդհանրացված խմբերի (ԶԼՄ-ների ղեկավարներ եւ այլ լրագրողներ) միջեւ, եթե չհաշվենք այն միանգամայն հասկանալի հանգամանքը, որ երկու խմբերի ներկայացուցիչներն իբրեւ հավանական հիմնադիրներ ավելի հաճախ առաջարկել են իրենք իրենց:

Մեր հետազոտության նպատակներից մեկը հայ լրագրողների եւ հասարակական գործիչների յուրատեսակ վարկանիշի, մասնագիտական հանրության մեջ նրանց հեղինակության որոշումն էր:

Հարցը ձեւակերպված էր հետեւյալ կերպ. « Ձեր աշխատանքի մասին ո՞ւմ կարծիքն եք հարգում եւ ո՞ւմ գնահատականները հաշվի կառնեք (նշեք անուններ լրագրության ոլորտից, հասարակական գործիչների, իրավաբանների եւ այլ մասնագետների թվից)»: Գիտակցելով, որ սա բավականին նուրբ թեմա է, ասենք միայն, որ նշվել է լրագրողների, հասարակական եւ քաղաքական գործիչների, իրավաբանների եւ այլ մասնագետների ավելի քան 150 անուն, այդ թվում՝ վեց հոգի նշվել է ավելի քան 10 անգամ, ինը հոգի՝ 3-7 անգամ: Ընդհանուր առմամբ, հայկական լրագրության բարոյական եւ մասնագիտական հեղինակությունների մասին կարծիքների նման բազմազանությունը, ըստ մեզ, կարելի է դիտարկել իբրեւ լրագրողական ընկերակցության ձեւավորվածության ոչ այնքան բարձր մակարդակի վկայություն, հատկապես՝ եթե այդ փաստը համադրենք մասնագիտական միջավայրի ներսում համերաշխության ցածր մակարդակի հետ, ինչն արձանագրվել է վերը (տես՝ աղյուսակներ 2 եւ 3 ու դրանց մեկնաբանությունները):

Եզրակացություն

Հետխորհրդային տարածքում իրապես անկախ եւ արդյունավետ «չորրորդ իշխանություն» ձեւավորելը բարդ գործընթաց է, ինչի հաջողությունը կախված է ոչ միայն տվյալ երկրի ընդհանուր տնտեսական, սոցիալ-հոգեբանական եւ քաղաքական իրավիճակից, այլեւ հենց լրագրողական հանրության՝ ԶԼՄ-ների սեփականատերերի ու խմբագիրների, մասնագիտական միավորումների, շարքային լրագրողների հասունության, մղումների եւ համակարգված ջանքերի մակարդակից: Անցման շրջանում հատկապես օրախնդիր է դառնում նաեւ տեղեկատվության ոլորտի իրավական կարգավորման եւ ԶԼՄ-ների ինքնակարգավորման ներդաշնակման խնդիրը, քանի որ ինքնակարգավորման համակարգը ծառայում է իբրեւ խոսքի ազատության պաշտպանություն՝ այն սահմանափակող օրենքներից ու պետական մարմիններից:

Վերջին տարիներին տարբեր երկրներում իբրեւ ԶԼՄ-ների գործունեության առավել բարձր որակ եւ արդյունավետություն ապահովելու կարեւոր մեխանիզմներից մեկը օգտագործվում է լրագրության ինքնակարգավորման համակարգը (իր տարբեր ձեւերով): Այս գաղափարն արդեն բավականին երկար քննարկվում է նաեւ Հայաստանի մասնագիտական շրջանակներում:

Ինքնակարգավորման համակարգի նկատմամբ հետաքրքրության աշխուժացումը պայմանավորված է, ամենից առաջ, այնպիսի խնդիրների այժմեականացմամբ, ինչպիսիք են խոսքի ազատության պաշտպանությունը, լրագրողների եւ ԶԼՄ-ների պատասխանատվության եւ պրոֆեսիոնալիզմի մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, հասարակության պատշաճ

վստահության նվաճումը եւ նրա պաշտպանությունը անբարեխիղճ հրապարակումներից, անկախ լրատվամիջոցների կայացման եւ զարգացման բարենպաստ միջավայրի ձեւավորումը:
Երեւանի մամուլի ակումբը նախաձեռնել էր սոցիոլոգիական հետազոտություն, որի նպատակն էր ծանոթանալ Հայաստանում ինքնակարգավորման համակարգի ստեղծման հնարավորությունների, ձեւերի եւ հեռանկարների վերաբերյալ լրագրողական հանրության առաջատար ներկայացուցիչների կարծիքին: Սույն հետազոտությունը բաղկացուցիչ մասն է այն նախապատրաստական աշխատանքների, որ իրականացնում է ԵՄԱ-ն՝ 2004 թվականի դեկտեմբերի 20-ին այդ խնդրով սեմինար անցկացնելու համար: Նախկինում ԵՄԱ-ն իրականացրել է մի շարք այլ միջոցառումներ, որոնք ուղղված էին գործընկերների շրջանում ՁԼՄ ինքնակարգավորման գաղափարների տարածմանը: Այդ մասին ասվել է վերեւում:

Հարցումն ընդհանուր առմամբ ցույց տվեց, որ լրագրողական հանրության ներկայացուցիչները գիտակցում են երկրում իրապես անկախ եւ անաչառ լրագրության գոյության համար անհրաժեշտ գործոնների անբավարարությունը: Հարցվածները կարծում են, որ հայ լրագրողներն իրենց գործունեության ընթացքում մեծամասամբ կողմնորոշվում են դեպի ՁԼՄ-ների ղեկավարների եւ սեփականատերերի «գիծը», ում հետ առաջին հերթին կապված են փոխադարձ պարտավորությունների համակարգով, եւ ոչ դեպի հասարկության շահերն ու միջազգային չափանիշները, որոնք մեր իրականության մեջ, ըստ հետազոտության արդյունքների, պահպանվում են 30 տոկոսով:

Միեւնույն ժամանակ, լրագրողական հանրության ներկայացուցիչների ճնշող մեծամասնությունը (59.6%) վստահ է, որ անգամ ներկա պայմաններում երկրում հնարավոր է ունենալ անկախ եւ անաչառ լրագրություն, ինչպես նաեւ, որ մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակ կարող է ապահովել հենց ինքը՝ լրագրողական հանրությունը (հարցվածների 91%-ը համաձայն է սրան):

Մեր կարծիքով, հասարակական կարեւորագույն ինստիտուտներից մեկի՝ զանգվածային լրատվության միջոցների ներսում զարգացման ու կատարելագործման մղումների նման բարձր մակարդակը պահանջում է լուրջ իմաստավորում, հատկապես հասարակության մեջ տիրող ընդհանուր պասիվության ու հոռետեսության մասին լայն տարածում գտած պատկերացումների ֆոնի վրա:

Իրավիճակին այս կերպ նայելու դեպքում զարմանալի չէ, որ հարցվածների 3/4 - ը (82.5%) պաշտպանում է ինքնակարգավորման համակարգ ձեւավորելու գաղափարը: Իբրեւ նման համակարգի առավել ընդունելի կառույց դիտարկվում է Մամուլի խորհուրդը, որի հիմնադիրները պետք է լինեն լրագրողական կազմակերպություններն ու ՁԼՄ-ների առաջին դեմքերը: Խորհրդի գլխավոր գործառույթները, ըստ հարցվածների մեծ մասի պատ-

կերացումների, պետք է լինեն հասարակության պաշտպանությունը անբարեխիղճ լրատվությունից եւ խոսքի ազատության պաշտպանությունը:

Հետազոտության այս կողմի վրա հարկ է հատուկ ուշադրություն դարձնել: Չնայած Հայաստանում ՁԼՄ-ների ինքնակարգավորման արդյունավետ համակարգի ձեւավորման մի շարք օբյեկտիվ պայմանների բացակայությանը, հարցվողներն արտահայտվել են դրա առավել զարգացած ու կազմակերպական առումով բարդ մոդելի՝ Մամուլի խորհրդի օգտին: Նման մոտեցումը, հավանաբար, վկայում է, որ լրագրողական հանրությունը հույս է դնում բացառապես այնպիսի նախաձեռնության վրա, որում ներքաշված կլինեն «գլխավոր ուժերը»: Հույսը, թե գործընթացը կարող է լինել «վարից - վեր» եւ սկսվել «փոքր ձեւերից», որոնք հետագայում կարող են վերաճել խոշորի, թույլ է:

Հաշվի առնելով օբյեկտիվ բարդությունները, ինքնակարգավորման համակարգ ստեղծելու ոչ միատեսակ տեղեկացվածությունն ու շահագրգռվածությունը, նպատակահարմար է թվում առաջին փուլում այդ համակարգում ներգրավել այն լրատվամիջոցներին, որոնց ներկայացուցիչները միանշանակ պաշտպանում են գաղափարը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ՁԼՄ-ների հարցված ղեկավարները բոլոր հարցերում ավելի վստահ ու լավատես են տրամադրված, քան լրագրողներն ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Միաժամանակ, ակնհայտ է, որ անհրաժեշտ են լրացուցիչ բանավեճեր եւ քննարկումներ Մամուլի խորհրդի (կամ ինքնակարգավորման այլ կառույցի) այն գործառույթների եւ իրավունքների վերաբերյալ, որոնք լրագրողական հանրությունը կամավոր կհանձնարարի դրան:

Ստորեւ՝ իբրեւ հավելված ներկայացնում ենք սոցիոլոգիական հետազոտության հարցաթերթիկը եւ հարցվածների ցուցակը:

Հավելված 1

Հարգելի գործընկեր

Լրագրողների շրջանում վաղուց քննարկվում է Հայաստանում ինքնակարգավորման մարմին կամ համակարգ ստեղծելու խնդիրը: Ինքնակարգավորումը կարեւոր դեր ունի արտասահմանյան ԶԼՄ-ների գործունեության մեջ:

Խնդրի վերաբերյալ լրատվամիջոցների ղեկավարների եւ լրագրողների կարծիքն իմանալու համար Երեւանի մամուլի ակումբը, ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ, հարցում է անցկացնում:

Ձեր անկեղծ պատասխանները կօգնեն որոշելու՝ անհրաժե՞շտ է, արդյոք, Հայաստանում ունենալ նման համակարգ եւ ի՞նչ գործառույթներ պետք է վերապահվեն դրանց:

Ակնկալում ենք ձեր աջակցությունը:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԶԼՄ / ՀԿ_____

Հարցվող _____

(պաշտոն, անուն, ազգանուն)

Հ Ա Ր Ց Ա Թ Ե Ր Թ Ի Կ

1. Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ է ղեկավարվում, ո՞ւմ հայացքներն ու ճաշակն է առաջին հերթին հաշվի առնում լրագրողների մեծամասնությունը հրապարակումը նախապատրաստելիս (նշեք 1-ից - 4՝ ըստ կարեւորության, 1 - ամենից շատ են հաշվի առնում, 4 - ամենից քիչ են հաշվի առնում)

Հայ լրագրողները հիմնականում անկախ են եւ ղեկավարվում են սեփական պատկերացումներով ու հայացքներով
_____

Լրագրողների մեծամասնությունը վարում է ՁԼՄ խմբագրի (կուսակցության, լրատվամիջոցի տիրոջ) քաղաքականությունը
_____

Լրագրողների մեծամասնությունը կողմնորոշված է դեպի հասարակության հետաքրքրությունները եւ ճաշակը
_____

Լրագրողների մեծամասնությունը առաջնորդվում է միջազգային մասնագիտական չափանիշներով
_____

2. Երկրում գոյություն ունեցող քաղաքական, սոցիալական եւ բարոյական ներկա իրավիճակում հնարավո՞ր է, արդյոք, ունենալ իրապես անկախ եւ անաչառ լրագրություն (նշեք շրջանակով)

- լիովին հնարավոր է _____1
- հնարավոր է _____2
- դժվարանում եմ պատասխանել _____ 3
- հնարավոր չէ _____ 4
- բացարձակապես հնարավոր չէ _____ 5

3. Փոխադարձ պարտավորությունների առումով ո՞ւմ հետ են ամենից ավելի կապված լրագրողները իրենց մասնագիտական պարտականությունները կատարելիս: Ստորակարգեք 1-ից 8 (1 - ամենից շատ են կապված, 8 - ամենից քիչ են կապված)

- ընտանիք _____

- քաղաքական համախոհներ _____
- պետություն _____
- ԶԼՄ-ների սեփականատերեր _____
- խմբագիր (տնօրեն) _____
- միջավայր (ընկերական) _____
- այլ լրագրողներ _____
- հանրություն _____
- Եթե ունեք այլ նկատառում, նշեք _____

4. Իհարկե, ստորեւ բերված բոլոր էթիկական նորմերը կարեւոր են լրագրողական գործունեության մեջ: Այնուամենայնիվ գնահատեք դրանք 5 միավորանոց համակարգով (1 - կարեւոր չէ, 5 - շատ կարեւոր է, միեւնույն գնահատականը կարելի է տալ մի քանի կամ բոլոր պատասխաններին)

- լրատվության հավաստիություն _____
- անաչառություն, անկողմնակալություն _____
- շահերի բախումից խուսափում _____
- փաստերի եւ կարծիքների տարանջատում _____
- տեղեկատվության եւ գովազդի տարանջատում _____
- համերաշխություն այլ լրագրողների հետ _____
- կաշառքի եւ շորթումների մերժում _____
- գրագողության բացառում _____

5. Ի՞նչ եք կարծում, որքանո՞վ են հայ լրագրության մեջ պահպանվում մասնագիտական էթիկայի վերոհիշյալ նորմերը (նշեք շրջանակով):

0 - 25% -ով	_____	1
26 - 50% -ով	_____	2

Ι 51 - 75% -ով _____ 3

Ι 76 - 100% -ով _____ 4

6. Ձեր կարծիքով, հնարավո՞ր է, որ մեր լրագրողական հանրությունն ինքը ապահովի մասնագիտական բարոյականության ավելի բարձր մակարդակ (նշեք շրջանակով):

- հնարավոր է _____ 1
- հնարավոր է որոշակի պայմաններում _____ 2
- դժվարանում եմ պատասխանել _____ 3
- հնարավոր չէ _____ 4
- բացարձակապես հնարավոր չէ _____ 5

7. Ինչպե՞ս եք վերաբերվում ԶԼՄ ինքնակարգավորման համակարգի ստեղծման գաղափարին (նշեք շրջանակով):

- համամիտ եմ _____ 1
- ավելի շուտ համամիտ եմ _____ 2
- դժվարանում եմ պատասխանել _____3
- ավելի շուտ համամիտ չեմ _____ 4
- համամիտ չեմ _____ 5

8. Տարբեր երկրներում ինքնակարգավորման տարբեր մարմիններ ու համակարգեր են գործում: Ինչպիսի՞ մարմին կամ համակարգ է նպատակահարմար եւ հնարավոր ձեւավորել Հայաստանում (նշեք շրջանակով, կարելի է նշել մի քանի պատասխան, եթե ցանկանում եք, առաջարկեք այլ տարբերակներ)

- մամուլի խորհուրդ _____ 1

- մամուլի օմբուդսման _____ 2
- ԶԼՄ-ների գործունեության վերլուծության կենտրոն, որը պարբերաբար կիրապարակի վերլուծականներ _____ 3
- լրագրողական հանրության կողմից պարբերաբար հրավիրվող էթիկայի հարցերով ժողով _____ 4
- առանձին ԶԼՄ-ի էթիկայի կանոնագիր _____ 5
- ոչ մեկը _____ 6
- այլ (նշեք) _____

9. Ի՞նչ գործառույթներ է նպատակահարմար վերապահել ինքնակարգավորման մարմնին (համակարգին), եթե ստեղծվի այդպիսին (ստորակարգեք 1 - 4, 1 - ամենակարեւորը, 4 - ամենաքիչ կարեւորը: Եթե ցանկանում եք, առաջարկեք նոր գործառույթներ)

- Հանրությանը պաշտպանել անբարեխիղճ լրատվությունից _____
- ԶԼՄ-ներին ու լրագրողներին պաշտպանել խոսքի եւ արտահայտվելու ազատության դեմ պետական մարմինների բոլոր ոտնձգություններից _____
- Լուծել պրոֆեսիոնալ էթիկայի, լրագրողական համերաշխության հարցերը _____
- Լուծել տարբեր ԶԼՄ-երի միջեւ ծագած վիճաբանություններն ու կոնֆլիկտները (արբիտրաժ) _____
- այլ (նշեք) _____

10. Ձեր կարծիքով, ովքե՞ր պետք է նախաձեռնեն նման համակարգի ստեղծումը եւ լինեն հիմնադիրները (նշեք շրջանակով, կարելի է նշել մի քանի պատասխան)

- ՁԼՄ-ների սեփականատերերը _____ 1
- ՁԼՄ-ների առաջին դեմքերը _____ 2
- Լրագրողական կազմակերպությունները _____ 3
- լրագրողները _____ 4
- հասարակության այլ ներկայացուցիչները _____ 5

11. Ձեր աշխատանքի մասին ո՞ւմ կարծիքն եք հարգում եւ ո՞ւմ գնահատականները հաշվի կառնեք (նշեք անուններ լրագրության ոլորտից, հասարակական գործիչների, իրավաբանների եւ այլ մասնագետների թվից)

_____	_____
ազգանուն	անուն
_____	_____
ազգանուն	անուն
_____	_____
ազգանուն	անուն
_____	_____
ազգանուն	անուն
_____	_____
ազգանուն	անուն

Զրույցի ավարտին . Այժմ խնդրեք ձեր զրուցակցին ավելացնել իր առաջարկությունները եւ նկատառումները քննարկված խնդրի վերաբերյալ.

_____
_____
_____
_____

Հավելված 2

Հարցված լրագրողների եւ լրատվամիջոցների ղեկավարների

Ցուցակ

(այբբենական կարգով)

Տպագիր մամուլ եւ ինտերնետային լրատվամիջոցներ

1. Աբրահամյան Արամ, «Առավոտ»
2. Աթաբեկյան Ներսես, «02»
3. Աղաջանյան Վահրամ, «3-րդ ուժ»
4. Ավետիքյան Հակոբ, «Ազգ»
5. Արամյան Աշոտ, «Ռեսպուբլիկա Արմենիա»
6. Բաբուխանյան Հայկ, «Իրավունք»
7. Բաղդասարյան Արա, «Ուրարտու»
8. Բաղդասարյան Արմեն, «168 ժամ»
9. Բաղդասարյան Էդիկ, «Հետք»
10. Գալաջյան Հովհաննես, «Իրավունք»
11.Դավոյան Միեր, «Քաղաք» հանդես
12.Դոխոլյան Արթուր, «Փակագիծ»
13. Երանյան Հովհաննես, «Երկիր»
14. Իսրայելյան Աննա, «Առավոտ»
15. Հակոբյան Արմեն, «Հայոց աշխարհ»
16. Հակոբյան Թաթուլ, «Ազգ»
17. Հայկազունի Ագապի, «Փակագիծ»
18. Հովհաննիսյան Տիգրան, «Հայ-ռուսական գործարար ամսագիր»
19. Ղազինյան Արիս, «Գոլոս Արմենիի»
20. Մարտիրոսյան Ջուլիետա, «Ավանգարդ»
21. Մկրտչյան Գագիկ, «Հայոց աշխարհ»
22. Նախշքարյան Ֆլորա, «Գոլոս Արմենիի»
23. Նահապետյան Գագիկ, «Հայաստանի Հանրապետություն»
24. Նաղդալյան Էդուարդ, «Դելովոյ էքսպրես»
25. Նիկողոսյան Տիգրան, «Հայաստան»
26. Պողոսբեկյան Էլինա, ԵՄԱ Տեղեկագիր
27. Սեյրանյան Սաթիկ, «168 ժամ»
28. Սեյրանյան Սպարտակ, «Երկիր»
29. Վարդանյան Վարդան, «Այբ-ֆե»
30. Քուրդիյան Ելենա, «Ռեսպուբլիկա Արմենիա»
31. Ֆարմանյան Տիգրան, «Հայաստանի Հանրապետություն»

Լրատվական գործակալություններ

32. Բաղդասարյան Հերբերտ, «Ֆոտոլուր»
33. Գրիգորյան Նիկոլայ, «Արտակարգ ալիք»
34. Զախարյան Կարեն, «Դե ֆակտո»
35. Զորյան Հրայր, «Արմենպրես»
36. Թադեւոսյան Արա, «Մեդիամաքս»
37. Խաչատրյան Հարություն, «Նոյյան տապան»
38. Մաշուրյան Սոնա, «Նոյյան տապան»
39. Մանգասարյան Ռուբեն, «Պատկեր»
40. Մկրտչյան Էմանուիլ, «Արմինֆո»

Հեռուստաընկերություններ

41. Ազարյան Արթուր, «Կենտրոն»
42. Բունիաթյան Գագիկ, «Հայ ԹՎ»
43. Գալոյան Արա, «Շողակաթ»
44. Եզեկյան Արթուր, «Շանթ»
45. Կիրակոսյան Արթուր, «Շանթ»
46. Կոստանյան Հրաչ, «Արմենակոբ»
47. Ղազարյան Պետրոս, «Կենտրոն»
48. Ղազարյան Մանյա, «Շողակաթ»
49. Մայրապետյան Սամվել, «Հ2»
50. Մանուկյան Գեղամ, «Երկիր մեդիա»
51. Միրզոյան Շուշանիկ, «Երկիր մեդիա»
52. Մկրտչյան Գագիկ, «Արմենիա»
53. Մովսիսյան Մեսրոպ, «Ա1+»
54. Յալանուզյան Կարլ, «Միր» ՄՀՌԸ
55. Նալբանդյան Գնել, Հայաստանի հանրային հեռուստաընկերություն
56. Սարգսյան Լաերտ, «ԹՎ-5»
57. Սարիբեկյան Էդուարդ, «Արմնյուս»
58. Սաֆարյան Արամ, «Հ2»
59. Ստեփանյան Ռուզան, «ԱԼՄ»
60. Վարդանյան Վահրամ, «Հայրենիք»
61. Քալաշյան Աշխեն, «ԹՎ-5»

Ռադիոընկերություններ

62. Ամիրյան Արմեն, Հայաստանի հանրային ռադիո
63. Արեւշատյան Շուշանիկ, «Վան»
64. Խաչատրյան Ռուզան, «Ազատություն»
65. Խումարյան Կորյուն, «Իմպուլս»
66. Հովհաննիսյան Ամասյա, Հայաստանի հանրային ռադիո
67. Մկրտչյան Արամ, «Ռադիո հայ»
68. Սարգսյան Վաչե, «Ազատություն»

Ժուռնալիստական կազմակերպություններ

69. Ալոյան Վարդան, խմբագիր-հրատարակիչների «Հայկական մամուլ» ընկերակցություն, “CS Publishing house” ՓԲԸ
70. Ամիրխանյան Ջուլիետա, «Ֆեմիդա»
71. Ամիրխանյան Վագա, «Հակաստվեր»
72. Գեւորգյան Աստղիկ, Հայաստանի ժուռնալիստների միություն
73. Հարությունյան Մեսրոպ, Երեւանի մամուլի ակումբ
74. Մելիքյան Աշոտ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
75. Նավասարդյան Բորիս, Երեւանի մամուլի ակումբ
76. Նիկողոսյան Արմեն, Երեւանի մամուլի ակումբ
77. Սարգսյան Նունե, «Ինտերնյուս»

Արտասահմանյան ԶԼՄ-ների սեփական թղթակիցներ

78. Գազազյան Արշավիր, «Դոյչե վելե»
79. Գրիգորյան Լեւոն, «Առաջին ալիք»
80. Դեմուրյան Ավետ, «Associated Press»
81. Թոփչյան Կարեն, BBC
82. Լիլոյան Տիգրան, ԻՏԱՌ-ՏԱՍՍ
83. Հարությունյան Մարիամ, «Ֆրանսպրես»
84. Մաթեւոսյան Համլետ, ՌԻԱ «Նովոստի»
85. Մկրտչյան Աննա, EFE
86. Մկրտչյան Հասմիկ, «Ռոյթեր»
87. Մանվելյան Ալեքսեյ, BBC

Մարզային լրատվամիջոցներ եւ ՀԿ-ներ

Արագածոտնի մարզ
88. Գրիգորյան Նորայր, «Դարձ» թերթ (Աշտարակ)

Արարատի մարզ
89. Աշուղյան Կարինե, «Արարատ» թերթ (Արտաշատ)
90. Հովհաննիսյան Մարգարիտա, «Արտաշատ» թերթ (Արտաշատ)

Արմավիրի մարզ
91. Դանիելյան Խաչիկ, «ԱԼՏ» ՀԸ, (Արմավիր)

Գեղարքունիքի մարզ
92. Խաչատրյան Յուրա, «Գեղամա աշխարհ» թերթ (Գավառ)
93. Հայրապետյան Պապ, «Սեւան» թերթ (Սեւան)

Լոռու մարզ
94. Արշակյան Կարեն, «Ֆորտունա» ՀԸ (Ստեփանավան)
95. Ափուջանյան Ֆահրադ, «Լուսարձակ» թերթ (Սպիտակ)
96. Բուլղադարյան Նաիրա, «Քաղաքացիական նախաձեռնություն» թերթ (Վանաձոր)
97. Միկոյան Մանվել, «Լոռու մարզ» թերթ (Վանաձոր)
98. Սաքունց Արթուր, «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի» Վանաձորի գրասենյակ

Կոտայքի մարզ
99. Գեղամյան իկար, «Կոտայք» թերթ (Աբովյան)

Շիրակի մարզ
100. Աբրահամյան Աղասի, «Կումայրի» թերթ (Գյումրի)
101. Բարսեղյան Լեւոն, «Ասպարեզ» ակումբ (Գյումրի)
102. Ղանդիլյան Արթուր, «Ցայգ» ՀԸ (Գյումրի)
103. Մարգարյան Սամվել, «Շիրակ» թերթ (Գյումրի)
104. Մինասյան Մարգարիտա, «Ցայգ» ՀԸ (Գյումրի)
105. Նահապետյան Անահիտ, «Տուֆաշխարհի առօրյան» թերթ (Արթիկ)

Սյունիքի մարզ
106. Ալեքսանյան Սամվել, «Սյունյաց երկիր» թերթ (Կապան)
107. Մեսրոպյան Ալվարդ, «Լաստ» ՀԸ (Գորիս)
108. Շահնազարյան Սուսաննա, Գորիսի մամուլի ակումբ

Տավուշի մարզ
109. Անանյան Վարդան, «Կամուտ» ՀԸ (Նոյեմբերյան)

ԻՆՔՆԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Միջազգային փորձն ու հեռանկարները Հայաստանում

SELF-REGULATION

International experience and prospects in Armenia

© ԵՄԱ 2004թ.

Ծավալը՝ 5.25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500

Տպագրվել է «Անտարես» հրատարակչատանը